

Ս. Գազարյան

ԳՐԱԲԱՐԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ
ՀԱՐՑԵՐ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ*

Ա. Հին ՀԱՅԵՐԵՆԻ ԻՐԻՆՎ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼԵԶՈՒ

Րնկեր Ստալինը «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատության մեջ աննախընթաց խորությամբ ու պարզությամբ ցույց տվեց, որ լեզուն «ծնվում ու զարգանում է հասարակության ծննդի ու զարգացման հետ միասին», որ լեզուն հասարակությունից դուրս չի կարող գոյություն ունենալ և դրա համար էլ «լեզուն ու նրա զարգացման օրենքները կարելի է հասկանալ միայն այն դեպքում, եթե այն ուսումնասիրվում է անխզելի կապի մեջ հասարակության պատմության հետ, որին պատկանում է ուսումնասիրվող լեզուն և որը հանդիսանում է այդ լեզվի ստեղծողն ու կրողը»¹։

Այսպիսով, երբ խոսվում է որևէ լեզվի մասին, պետք է ոչ միայն նկատի ունենալ նրա նյութական կողմը, լեզվական իրողությունները, այլև այն պայմանները, որոնց մեջ կազմավորվում է լեզուն, ձևավորվում են նրա առանձնահատկությունները, լեզվի զարգացման օրինաչափությունները։ Եթե՝ կական ընդհանուր լեզուները կազմավորվում են տվյալ ժողովրդի ձևավորման հետ և պահպանվում ու տարածվում այդ ժողովրդի քաղաքական իշխանության, կուլտուրական և տնտեսական կազմակերպությունների միջոցով։ Ժողովրդի ընդհանուր լեզուն կազմավորվում է որևէ լեզվից, բարբառի կամ բարբառների հիման վրա, նայած պատմական կոնկրետ պայմաններին։ Երբեմն որևէ բարբառ նրա համար ստեղծված նպաստավոր պայմանների շնորհիվ տարածվում ու դառնում է ընդհանուր լեզու, ինչպես ասի կատարվեց հին Հունաստանում մեր թվականությունից առաջ չորրորդ դարում։ Այդ ընդհանուր լեզվի հիմքում ընկած էր Ատտիկեի բարբառը, որը կարողացել էր ընդհանուր լեզվի առաջնության բարձրանալ Աթենքյան կալստության խորտակումից հետո, երբ Աթենքն սկսել էր քաղաքական և կուլտուրական մեծ դեր կատարել Հունաստանի կյանքում։ Ատտիկեի բարբառը՝ դառնալով ընդհանուր լեզու, իրեն է ենթարկում ոչ միայն հունական մնացած բարբառները, այլև տարբեր լեզուներ։ Հին Հռոմում լատիներենն է դառնում ընդհանուր լեզու, որը ձևավորվում է նախ քաղաքում՝ Հռոմում, ապա տարածվում է և դառնում ամբողջ Իտալիայի ընդհանուր լեզուն՝ իր մեջ ձուլելով շատ բարբառներ և առանձին լեզուներ։ Նույն կերպով կատարվում է նաև Ֆրանսիայում։ Իլ-դե-Ֆրանսը տարածվում ու դառնում է ամբողջ Ֆրանսիայի լեզուն այն ժամանակվանից, երբ Ֆրանսիայի շրջանները միավորվում են մի թագավորական իշխանության տակ։ Այդ լեզուն ընդունում են նաև այն օտար ցեղերը, որոնք ապրում էին Ֆրանսիայում և ունեին իրենց լեզուն։

* Տպագրվում է մտքերի փոխանակության կարգով խմբ.

1 Ի. Վ. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», էջ 49։

Ժողովուրդների գոյացման շրջանում ընդհանուր լեզուները մեծ մասամբ կազմավորվում են որևէ ցեղային լեզվի կամ որևէ բարբառի հիման վրա: Այն լեզուն, որ ընկնում է ընդհանուր լեզվի հիմքում, իհարկե ենթարկվում է տարբեր լեզուների և իր բարբառների ազդեցությանը, ընդունում է նրանց իրողությունները և դրանով ավելի հարստանում ու կատարելագործվում է: Սակայն այդ նոր լեզուն կարող է ձևավորվել նաև բարբառների համակենտրոնացմամբ: Իսկ ընդհանուր լեզուն կարող է ձևավորվել նաև բարբառների համակենտրոնացմամբ: Իսկ ընդհանուր լեզուն կարող է ձևավորվել նաև բարբառների համակենտրոնացմամբ: Իսկ ընդհանուր լեզուն կարող է ձևավորվել նաև բարբառների համակենտրոնացմամբ:

Հայոց ընդհանուր լեզվի կազմավորման պրոցեսը զգալի չափով տարբերվել է Արևմտյան Եվրոպայի ժողովուրդների լեզուների կազմավորման պրոցեսից: Հայտնի է, որ հունարենի, լատիներենի կամ ֆրանսերենի ու ժեղացման ու տարածման մեջ գլխավոր դեր են խաղացել ոչ միայն պետությունն ու քաղաքական այլ հաստատությունները, այլև քաղաքները և քաղաքային կուլտուրայի տարածումը: Մինչդեռ այդպես չի ընթացել ընդհանուր լեզուների կազմավորումը Արևելքի մի շարք երկրներում, որտեղ, ի տարբերություն Արևմուտքից, ցեղային միությունների լեզուներն են խոշոր դեր կատարել ընդհանուր լեզուների ձևավորման մեջ: Այսպես, օր.՝ հայերը իբրև ժողովուրդ սկսում են կազմավորվել ոչ թե այն ժամանակ, երբ Հայաստանում կառուցված քաղաքների շուրջը համախմբվում են հայ ազգաբնակչության լայն խավերը, այլ շատ վաղուց, հսկանաբար դեռևս ուրարտական շրջանում: Հայկական որոշ ցեղեր բավականաչափ ուժեղացել էին նույնիսկ խեթերի թագավորության մեջ, ուր նրանք իրենց ինքնուրույնությունը պահպանելու համար պայքարում էին այլ ցեղերի դեմ, թեև այդ շրջանում սերտ համախմբվելու, միավորվելու և մի ամբողջություն կազմելու պահանջը խիստ կերպով չէին զգում: Մեր թվականությունից առաջ 7—6-րդ դարերում հայկական ցեղերի մեջ խոշոր տեղաշարժեր են կատարվում. նրանք ավելի ուժեղանում ու համախմբվում են հայաստանի նական ցեղային միության շուրջը. այս ցեղային միությունը դառնում է այն հիմքը, որի վրա ձևավորվում է հայ ժողովուրդը, իսկ նրա (ցեղային միության) ընդհանուր լեզուն զարգանում ու դառնում է հայ էթնիկական լեզուն:

Հայկական ցեղային միությունը մեր թվականությունից առաջ 5—6 դար առաջ այնքան ուժեղացած է լինում, որ ապստամբում է Դարեհ Ա-ի դեմ, որը մեծ դժվարությամբ և մի քանի ճակատամարտեր տալով միայն կարողանում է ճնշել ապստամբությունը և իրեն ենթարկել ապստամբներին: Երկու պարսիկները, այնուամենայնիվ, չեն կարողանում մինչև վերջը ընկճել հայերին, ձուլել իրենց մեջ, ինչպես այդ կատարում էին ուրիշ ցեղերի հետ: Հայկական ցեղային միությունը, որը շատ առանձնահատկություններով հանդես էր գալիս իբրև առանձին ժողովուրդ՝ շարունակում է զարգացնել իր կուլտուրան ու լեզուն՝ միշտ հանդես գալով իբրև պարսիկների ուժեղ մրցակից:

Հայկական ցեղային միությունը, որ Դարեհի ժամանակ հանդես էր գալիս իբրև մի ամբողջություն, ընդգրկում էր նաև ոչ հայկական ծագում ունեցող ցեղեր, որոնք գտնվելով հայերի իշխանության տակ և ավելի ու ավելի մոտենալով նրանց, ձուլվում են հայերի մեջ ու ընդունում հայերենը նախ իբրև ընդհանուր հաղորդակցության միջոց՝ հայկական ցեղային միության մեջ մտածող ցեղերի համար, ապա իբրև խոսակցական լեզու նաև ամբողջ ցեղի անդամների համար: Որ հայ ժողովրդի կազմավորման մեջ իրենց դերն են կատարել նաև տարբեր ծագում ունեցող ցեղեր, պատմական իրողություն է և հայ

ժողովրդի պատմությամբ զբաղվողների համար կասկած չառաջացնող փաստ. Հերոդոտի և Քսենոֆոնի երկերում նշված են Հայկական լեռնաշխարհում առկա լիակատար բնակություն հաստատած շատ ցեղեր, որոնց լեզուների հետքերը պահպանված են հայերենում: Այդ ցեղերից կարելի է նշել կորդուսներին, մարդերին, խալդայներին, տաոխներին, մակրոններին, կիմերական-սկյութական ցեղերին, մոսխներին, ուտիներին, պակտերին, տիբարիներին և շատ այլ ցեղերի, որոնց մասին հիշատակություններ ունեն նաև մեր պատմիչները: Այդ ցեղերից շատերը ձուլվելով հայ ժողովրդին՝ երկար ժամանակ պահպանել են իրենց անունները և սովորությունները, հավանաբար նաև հայերենի խիստ ազդեցության ենթարկված իրենց լեզուները, որոնք միայն ավելի ուշ շրջանում լրիվ շափով ձուլվել են հայերենին: Մյուս բազմազան ցեղերը, — ասում է Հ. Մանանդյանը, — որոնց մեծագույն մասը հետագայում ձուլվել էր արմենների հետ՝ Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ժամանակ եղել են առանձին ժողովուրդներ՝ յուրաքանչյուրը իր սեփական լեզվով կամ բարբառով»¹:

Այդ ցեղերը, որոնց մի մասը անկասկած ազգակից ցեղեր էին, մեր թվականությունից առաջ 3—2-րդ դարերում մեծ մասամբ հայացել էին և ունեին իրենց ընդհանուր լեզուն: Այդ առթիվ կա Ստրաբոնի շատ ուշագրավ մի հիշատակությունը.

«Պատմում են, — ասում է Ստրաբոնը, — որ Արմենիան եղել է առաջ փոքր և մեծացել է Արտաքսիասի (Արտաշեսի) և Զարիադրիսի ձեռքով, որոնք նախապես Անտոնիոս Մեծի զորավարներն էին (στρατηγοί) էին և նրա անկումից հետո թագավորեցին՝ մեկը Ծոփքի, Ակիաենեսի, Օդոմանտիսի և մի քանի այլ գավառների վրա, իսկ մյուսը Արտաշատի շուրջ գտնվող երկրի վրա»²: Նրանք, — շարունակում է Ստրաբոնը, — ընդարձակում են իրենց երկրի սահմանները, գրավում մի շարք շրջաններ՝ տարբեր ցեղերից կազմված ազգաբնակչությունով, «այնպես որ բոլորը միալեզու եղան»³:

Ստրաբոնի վկայությունից պարզվում է, որ մեր թվականությունից առաջ երկրորդ դարում Հայաստանում հայերենը ընդհանուր լեզու էր ոչ միայն ազգակից ցեղերի, այլ հայերին միացած տարբեր ցեղերի համար: Սակայն այդ չի նշանակում, որ այդ ժամանակ Հայաստանում չկային բարբառներ և նույնիսկ տարբեր լեզուներ: Լեզուների, ինչպես նաև ցեղերի տարբերությունը երկար ժամանակ պահպանվել է Հայաստանում նույնիսկ մեր թվականության երկրորդ-երրորդ դարերում: Եվ այդ հասկանալի է. գտնվելով ժողովուրդների շարժումների խառնուրդում, Հայաստանը պահպանել ու սնել է ցեղային շատ հոսանքներ, որոնք իրենց կուլտուրայի և լեզվի հետքն են թողել հայոց կուլտուրայի ու լեզվի մեջ:

Հայ ժողովրդի պատմության առանձնահատկություններով էլ պետք է բացատրել հայերենի բարբառների խիստ տարբերությունն ու բազմությունը և հայերեն մի քանի գրավոր լեզուների գոյության փաստը:

Այն հայերենը, որը, ինչպես իմանում ենք աղբյուրների տվյալներից, մեր թվականությունից առաջ երկրորդ դարում արդեն ծառայում էր իբրև ընդհանուր

¹ Հ. Մանանդյան, «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատ. Ա. էջ 73:

² Նույն տեղում, էջ 116:

³ Նույն տեղում:

հաղորդակցական միջոց Հայաստանի ամբողջ բնակչության համար, սկսում է մշակվել և կատարելագործվել հայ ժողովրդի զարգացման, հայկական պետականության ուժեղացման ու նրա ազդեցության տարածման հետո՝ նա սկսում է ուժեղ կերպով զարգանալ Արտաշես առաջինի և հատկապես Տիգրան երկրորդի ժամանակաշրջանից սկսած, երբ Հայաստանի տերիտորիայում բնակվող մի քանի միլիոնանոց ժողովրդի բոլոր անդամներն իրենց հայ էին համարում և տնտեսապես ու կուլտուրապես սերտորեն կապված էին միմյանց հետ։ Այդ լեզվով Տիգրան երկրորդի սխրագործությունների ու շինարարական լայն գործունեության մասին հյուսվել են բազմաթիվ երգեր ու պատմություններ, որոնց մնացորդները գրի են առել մեր պատմիչները հինգերորդ դարում։ Մովսես Խորենացին հատկապես մեծ գովեստով է խոսում Տիգրանի մասին. «Քանզի սա, — ասում է նա, — ամենացունց թագաւորացն մերոց հարստագոյն և խոհեմագոյն, և արանցն այնոցիկ և ամենեցուն քաջ։ Որ և... զմարացն ի բաց բառնալով զիշխանութիւնն, և զՅոյնս ոչ սակաւ ժամանակս ընդ իւրեաւ նուաճեալ հնազանդէր»¹։

Տիգրանի մասին Խորենացու հաղորդած տեղեկությունները, ինչպես նաև նրա շուրջը ստեղծված լեգենդներն ու երգերը, որոնք երկար ժամանակ պահպանվել են հայ ժողովրդի մեջ, հիմք են տալիս ենթադրելու, որ հայոց համա-ժողովրդական լեզուն իր հիմնական դրսևորումներով այդ ժամանակ ոչ միայն կայունացել, այլև կատարում էր պետական լեզվի ֆունկցիա։

* * *

Հին հայերենը, կամ ինչպես ընդունված է կոչել, գրաբարը, որով գրված են հայ ժողովրդի կուլտուրայի պատմության ոսկե ֆոնդը մտած բազմաթիվ ստեղծագործություններ, կարելի է բաժանել երկու շրջանի՝ գրավոր աղբյուրներով ավանդված և նախագրային շրջանների։

Հին հայերենի նախագրային շրջանի վիճակի մասին մենք ուղղակի տվյալներ չունենք, սակայն հինգերորդ դարի հայերենի իրողությունները և մեր պատմագիրների հաղորդած փաստերը լրիվ չափով հիմք են տալիս ենթադրելու, որ նախագրային հայերենը իբրև հայ ժողովրդի ընդհանուր լեզու իր հիմնական առանձնահատկություններով կայունացած է եղել հինգերորդ դարից դեռ շատ առաջ։ Մեր պատմագիրները և մատենագիրները իրենց երկերում հիշատակում են հայ ժողովրդի մեջ պահպանված հին սովորությունների, ժողովրդական հերոսների և առանձին թագավորների շուրջն ստեղծված առասպելների, երգերի ու վեպերի պատառիկներ, որոնք իրենց արվեստով, ոճով ու լեզվական դրսևորումներով հայ ժողովրդի պատմության հնագույն շրջանից են գալիս և թեև չեն նույնանում հինգերորդ դարում ու հետո ստեղծված նման գործերի լեզվի ու ոճի հետ, բայց իրենց ընդհանուր առաջատարություններով չեն տարբերվում նրանցից։ Հին առասպելների, երգերի և վեպերի մասին ընդարձակ տեղեկություններ է տալիս Մովսես Խորենացին. նա իր պատմության մեջ բառացի մեջ է բերում վիպասանական շրջանի գրականության մի քանի պատառիկներ, որոնց լեզուն նկատի ունենալով՝ մենք կարող ենք որոշ գաղափար կազմել հայոց հին լեզվի ավելի վաղ շրջանի պատկերի մասին։ Վիպասանական գրականության գոյության փաստը և նրա այդ շրջանի մնացորդները

¹ Մ. Խորենացի, «Պատմութիւն», էջ 71, Տփղիս, 1913 թ.։

լեզվի վաղեմությունը կասկածանք չեն կարող հարուցել. ինքը Մ. Խորենացին հայտնում է, որ հնում եղել են ժողովրդական վեպեր, երգեր, որոնք հայ ժողովուրդը պատմել ու երգել է դարեր շարունակ և որոնց ինքը ծանոթ է եղել ու պրանք լսել է իր իսկ ականջներով¹։ Մեր մյուս պատմիչները նույնպես հիշատակություններ ունեն վիպասանական շրջանի գրականության, հայ ժողովրդի սովորությունները պատկերող պատմվածքների, վեպերի և երգերի մասին։ Փ. Բուզանդը գրում է, որ հայ ժողովուրդը սիրում էր «զիւրեանց երգս առասպելաց վիպասանութեանն»² և խույս էր տալիս եկեղեցական քարոզներից ու ծեսերից, չէր լսում աստծո պատգամները, և «զքանս սուրբս» արհամարհում էր։ Եղիշեն հաղորդում է, որ նույնիսկ իր ժամանակ ժողովուրդը, ինչպես նաև իշխող խավերը չէին մոռացել հեթանոսական երգերը և մաշում էին «զերկարութիւն գիշերոցն լերգս արբեցութեան և ի կաքաւս լկտութեան»³։

Հայ ավանդական այգ բանահյուսությունը երկար դարերի ընթացքում բյուրեղանալով և հաստատուն կերպարանք ստանալով՝ պահպանվում էր ժողովրդի մեջ ոչ միայն իր բովանդակությամբ, այլև ձևով, լեզվական դրսևորմամբ։ Ուղղակի տվյալներ չունենալու պատճառով չենք ռզում ասել, որ դրանք մշակվել են նաև գրավոր խոսքի մեջ, թեև այդ ենթադրության համար որոշ հիմքեր կան։ Իրական լեզուն, անկասկած, ավանդությունը պահպանող ամենաուժեղ միջոցներից մեկն է. բայց այդ դեռ չի նշանակում, թե բանավոր խոսքը չի կարող պահպանվել երկար ժամանակ և ավանդաբար չեն կարող անցնել ժողովրդի ստեղծագործության առավել սիրված ու մասսայական դարձած երկերը։ Պատմության մեջ հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ դարեր շարունակ բանավոր դրությամբ պահպանվել են գրական, գիտական և այլ ստեղծագործություններ՝ առանց փոքր ինչ փոփոխության ենթարկվելու։

Խորենացու հիշատակած վեպերի և երգերի հատվածների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ նրանք խորը հնություն ունեն և իրենց բովանդակությամբ ու լեզվով ձևավորվել են մեր թվականությունից առաջ։ Օրինակի համար՝ Վահագնի երգը, ինչպես ցույց է տվել Մ. Աբեղյանը, բովանդակում է «հին առասպելական ըմբռնումն ամպրոպի աստվածության մասին»⁴ և հայոց հնագույն ժողովրդական երգերից է։ Այդ երգի մեջ գործածված են հայոց ժողովրդական լեզվին հարազատ, պարզ և արտահայտիչ մտկոցներ, ինչպես՝ հուր հեռ, կարմրիկն եղեգնիկ, խաւտեալ պատանեկիկ, որոնք բոլորն էլ հասկանալի են նույնիսկ այժմ։ Սակայն միայն նշվածով չեն սահմանափակվում Վահագնի երգի լեզվի առանձնահատկությունները. այգ երգում օգտագործված է հայ ժողովրդական ստեղծագործությանը հատուկ մի եղանակ ևս՝ փաղաքական բաների գործածությունը. ինչպես՝ եղեգնիկ, կարմրիկ, պատանեկիկ, աչկունք (աչիկներ)։ Այդ երգին հատուկ են նաև կրկնությունները, որոնք նույնպես կապվում են ժողովրդական ստեղծագործության հետ, օրինակ՝ «Երկնէր երկին, երկնէր երկիր, երկնէր և ծովն ծիրանի» և այլն։ Վերոհիշյալ առանձնահատկությունները պահպանված են նաև մյուս երգերում, օրինակ՝ այդ բաշ Արտաշես, աշագեղու դստեր, արի աբայ, զոսկեօղ շիկափոկ պարան, փափուկ

¹ Մ. Խորենացի, «Պատմություն» ԳԱ. ԳԼ. ԼԱ։

² Փատոսոս Բիզանդացու «Պատմ. հայոց», 1883 թ. II. Պետեր., էջ 29։

³ Եղիշե, «Պատմութիւն վարդանանց» Կ. Պոլիս, 1866, էջ 128։

⁴ Մ. Աբեղյան, «Հայ դրականության պատմություն» հ. 1, էջ 37։

օրիորդ և այլն: Այդ երգերի մեջ եղած մի շարք ոճեր ու դարձվածքներ նույնպես վկայում են, որ այդ երգերն իրենց բովանդակությամբ չեն հակադրվում հայ ժողովրդի՝ ժամանակի ըմբռնումներին և իրենց ձևով չեն տարբերվում ժողովրդի մեջ պահպանված առանձնների, ասացվածքների և ոճերի լեզվից. այդպիսի դարձվածքներից են՝ Ծովն ծիրանի բառակապակցությունը, որը շատ գործածական է հայ ժողովրդի մեջ. «Կոնլ կոփել զղուռն» (նշանակում է «աղջիկ ուզել») դարձվածքն իր այդ իմաստով կապված է հայկական այն հին սովորության հետ, երբ մեկից աղջիկ ուզելիս դնում էին աղջկա հոր տան դուռը ծեծում և նստում «խնամաքարին» և դրանով հայտնում իրենց մտադրությունը. «տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արսաշեսի, տեղայր մարգարիտ ի հարսնութեանն Սարիճկան» արտահայտությունը նույնպես կապված է հայկական հին սովորությունների հետ, որոնք այնքան ուժեղ են արմատավորվել հայ ժողովրդի մեջ, որ քրիստոնեությունը արգելքներ չի հարուցել հարսանիքի ժամանակ փեսայի և հարսի գլխին տրամներ շաղ տալու այդ հին սովորության դեմ, թեև այդ սովորությունը հետագայում այլ արտահայտություն է ստացել և դրամները փոխարինվել են փեսեռով կամ չոր մրգերով:

Այդ երգերի պատառիկների բառապաշարը համարյա ամբողջությամբ պահպանված է մեր քարեառների մեծ մասում և աշխարհաբարում. հատկանշական է, որ որոշ բառեր, ինչպես խաւարածի (քարեառներում խաւարածի — խաւածի), փոկ, բումբ, ծուխ, պարան, օղ, շատ, շեկ, կարմրիկ և այլն իրենց ձևով և այդ հատվածներում գործածված իմաստով ավելի տարածված են մեր քարեառներում, քան գրական հին լեզուներում: Այդ հատվածների քերականությունը իր բոլոր դրսևորումներով, իհարկե, չի համապատասխանում գրաբարի քերականությանը: Այդ երգերի մեջ կան ուղղական և հայցական հոգնակի հոլովների միաձևության դեպքեր, ինչպես՝ «շատ ցաւեցուց զմէջ փափուկ օրիորդին», «ընկեց ի մէջ օրիորդին Ալանաց» (փոխ. մէջս), գրաբարից տարբեր ձևով գործածված բայեր, ինչպես՝ «արագ հաւուցանելով ի բանակն իւր» (փոխ. հասուցեալ), գրաբարում համարյա չգործածված բառեր՝ «շատ», «մոռուս» և այլն, որոնք ցույց են տալիս, որ այդ պատառիկների լեզուն քերականությամբ գրաբարին խիստ մոտ լինելով հանդերձ, այնուամենայնիվ, տարբերվում է նրանից: Սակայն դրանով չի հերքվում այդ երգերի լեզվի և գրաբարի միջև եղած ընդհանրությունը, ինչպես նաև հիմնական արտահայտություններով նրանց նույնությունը, այլ պարզվում է, որ գրաբարը հղկվել ու մշակվել է ինչպես 5-րդ դարից առաջ, նույնպես և 5-րդ դարում:

* * *

Գրաբարի մշակվածության, զարգացման երկար շրջան անցած լինելու մասին են խոսում նաև բազմաթիվ ոճեր ու դարձվածքներ, որոնք իրենց ձևով և իմաստով դարերի խորքից են գալիս, օրինակ՝ այնպիսի ոճեր և դարձվածքներ, ինչպիսիք են՝ բաւնակից արեգական, դուր ողջ լեռու և մեմ մեզէն ողջ եմ դիցն օգնականութեամբ, որ քո Շաբայի ուրկուրն է, մեր Շիրակա ամբարձ չեն, յարեի արկանել, արե կրել, ինչպես նաև երկնէր երկին, երկնէր երկիր, երկն ի ծովոյն ունէր գկարմրիկն եղեգնիկ և այլն, իրենց իմաստով հայ ժողովրդի հնագույն ըմբռնումների հետ են կապված, հետևաբար նաև իրենց ձևով շատ հնուց են գալիս. հայտնի է, որ լեզվական ձևը համեմատաբար ավելի կայուն է, որովհետև լեզվի մեջ որևէ ձև չի կարող փոփոխվել առանց դրա համար

ստեղծված անհրաժեշտության, իսկ երբ լեզվական փաստերը կայունանում են, հասարակությունը ձգտում է ամեն կերպ պահել նրա համար ըմբռնելի դարձած լեզվական ձևերը, չիտախտել լեզվի ներքին օրինաչափությունները, որպեսզի դրանք չդառնան անհասկանալի՝ ամբողջ ժողովրդի համար: Այդ բանը ամենից շատ երևում է ոճերի մեջ. ժողովուրդը դարձանում, փոխում է իր աշխարհայացքը, անցնում է նոր շրջան, հասարակական նոր հարաբերություններ, պիտական նոր կարգեր և ստեղծում, փոխում է իր ապրելակերպը, բայց պահում է իր լեզուն, շատ հին մտածողության հետ կապված ոճերն ու դարձվածքները:

Այդպիսի լեզվական իրողությունները, ինչպես հրեաց մեր բերած օրինակներից, բազմաթիվ դրսևորումներով պահպանված լինելով նաև հին հայերենում՝ վկայում են նրա մշակվածությունը, ընդհանուր լեզվի ֆունկցիա ունենալը՝ հնագույն ժամանակներից սկսած: Բերած փաստերին կարելի է ավելացնել նաև այն բազմաթիվ փոխառությունները, որոնք կատարել է հայերենը հնագույն լեզուներից՝ խալդեերենից, ասորերենից, խուրրի-միտանիերենից, պարսկերենից և այլն: Այդ փոխառությունների մեջ հատկապես մեծ կշիռ են կազմում պարսկերեն բառերը, որոնց թիվը հազար չորս հարյուրից ավելի է: Պարսկերեն բառերի փոխառությունը ցույց է տալիս, որ հայերենը մեր թվականությունից դեռևս շատ առաջ այնքան ուժեղ է եղել, որ կարողացել է փոխ առնել և յուրացնել օտար տարրը մեծ քանակությամբ, չձուլվել ժամանակի զարգացած լեզուներին և պահպանել իր ինքնուրույնությունը:

Պրոֆ. Հ. Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմություն» աշխատության առաջին հատորում մանրամասն քննության է առնում հայերենի վրա պարսկերենի թողած ազդեցությունը և բազմաթիվ փաստերով ցույց է տալիս, որ այդ մեծաքանակ բառերի գերակշռող մեծամասնությունը գալիս է հին կամ միջին պարսկերենից: Հին պարսկերենը ավանդված է մեզ մեր թվականությունից առաջ 560—330 թվերին գրված սեպագիր արձանագրություններով, իսկ միջին պարսկերենը և հատկապես նրա առաջին շրջանը համարվող պարթևական պահլավերենը, որի հետ են կապվում հայերենին անցած պարսկերեն շատ բառեր՝ ավանդվել է մեր թվականությունից առաջ 256 թվից մինչև մեր թվականությունից հետո 226 թիվը գրված արձանագրություններով: Հայերենը պարսկերենից կատարել է փոխառություններ նաև ավելի ուշ շրջանում. բայց դրանք, ինչպես նշվեց, ավելի փոքրաթիվ են և որևէ չափով չեն կարող օգնել առաջադրված հարցի պարզաբանմանը: Հայերենին անցած պարսկերեն բառերի ժամանակը որոշելու համար առաջին հերթին նկատի է առնվում բառի հնչյունական համապատասխանությունները, որովհետև պահլավերենի հնչյունաբանական օրինաչափությունները զգալի կերպով տարբերվել են ուշ շրջանի պարսկերենի հնչյունական օրինաչափություններից. պահլավերենն ա հնչյունը տառադարձվել է հայերեն՝ ա, բ-ն՝ բ, դ-ն՝ դ, ե-ն՝ ե-է, գ-ն՝ գ, ի-ն՝ ի, ջ-ն՝ ջ, մ-ն՝ մ, ն-ն՝ ն, օ-ն՝ ուոյ, ր-ն՝ ր-ռ, պ-ն՝ պ-փ, ս-ն՝ ս, շ-ն՝ շ, վ-ն՝ վ, ժ-ն՝ ժ, և այլն: Այդ հիմունքով հեշտությամբ կարելի է իմանալ, թե բառը որ շրջանում է փոխ առնված. օրինակ՝ պարս. bad բառը հայերեն վատ ձևով է տառադարձված, այդ նշանակում է, որ այդ բառը մտել է հայերենի մեջ պահլավերենից, որովհետև պահլավերենում այդ բառը vat է արտասանվել. նույնը կարելի է ասել նաև javedan, որը տառադարձված է յալիտեան, guraz՝ վարազ, arzan՝

1 Հմտ. Հ. Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», հատ. I, էջ 238:

արժան, bazar վաճառ քառերի մասին, որովհետև պահպանվել են հիշված բառերը արտասանվել են այն ձևով, ինչ ձևով պահպանվել են հայերենում¹ Բազմաթիվ բառեր, որոնք հին պարսկերենում կամ պահպանվել են վերջացել են ակ-ով, նոր պարսկերենում պահպանվել են կ-ի կորուստով և սլ-ի հնչյունափոխմամբ. դրանից հետևում է, որ քոլոր այն պարսկերեն բառերը, որոնք հայերենում ունեն ակ վերջավորություն, հայերենին են անցել ավելի հին շրջանում. օրինակ՝ նամակ (nama), դորակ (dara), նիզակ (niza), քուռակ (kurra), մատակ (mada), ճուռակ «բազէ» (čurra), դիպակ (diba), կրբակ (kurba), հրեշտակ (farrista) և այլն: Այս ձևով քննության առնելով հայերենի մեջ մտած պարսկերեն բառերը՝ պրոֆ. Աճառյանը առանձնացնում է քոլոր այն տերմինները, որոնք ավելի հին շրջանում, այսինքն՝ մեր թվականությունից առաջ կամ մինչև մեր թվականության երկրորդ դարի վերջերն են մտել հայերենի մեջ: Այդ բառերը մոտավորապես հասնում են հազարի (1405-ից): Այդ նշանակում է, որ այդ բառերի զգալի մասը, ըստ երևույթին, հայերն ու պարսիկները ժառանգել են ավելի հին ցեղերից, սակայն դրան զուգընթաց պարզվում է նաև, որ հայերենը այդ ժամանակաշրջանում իր հիմնական առանձնահատկություններով այն աստիճանի կալույնացած է եղել, որ ընդունելով օտար բառեր և յուրացնելով դրանք՝ նույնովիմբ պահպանել է մինչև հայոց դրերի գլոստը:

Բ. ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՀԵՏ

Արտաշեսյան դինաստիայի վերացումից հետո Հայաստանը դառնում է Պարսկաստանի և Հռոմի կռվախնձորը. հույներն ու պարթևները նորից են գլուխ քարծրացնում և ցանկանում են տիրել Հայաստանին: Ինչպե՞ս հայ ժողովուրդը ուժեղ դիմադրություն ցույց տալով թշնամիներին՝ կարողանում է պահպանել իր ինքնուրույնությունը և զարգացնել իր կուլտուրան ու լեզուն: Հույն-պարսկական պատերազմների և Հայաստանը ասպատակելու ընթացքում, թեև Տիգրան 2-րդի նվաճած մի շարք շրջաններ անջատվում են Հայաստանից, բայց հայ ժողովրդի ամբողջությունը չի խախտվում: Տնտեսության և կուլտուրայի զարգացումը նույնպես կանգ չի առնում, թեև Հայաստանը սկսում է զարգանալ սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական նոր իրադարձությունների պայմաններում. Հայաստանում ուժեղանում են ֆեոդալական հարաբերությունները, կազմակերպվում են «աշխարհներ» և «գավառներ», որոնց կառավարիչները նշանակվում էին թագավորի կողմից: Այդ կառավարիչները, որոնց տրվում էր նախարար անունը, աստիճանաբար դառնում էին իրենց հովանավորության տակ գտնվող «գավառների» և «աշխարհների» ժառանգական իշխանները, որոնք գնալով ավելի ու ավելի ընդարձակում էին իրենց կառավարչական և տնտեսական գործունեության շրջանակները: Մեր թվականության 3-ր դարում երկրում արդեն սահմանազատված էին թագավորական տանը, կրոնական դասին և նախարարներին պատկանող հողերը: Ֆեոդալական նախարարների մեջ այդ շրջանում հատկապես աչքի էին ընկնում Սյունյաց, Բագրատունյաց, Արծրունյաց, Ռշտունյաց, Կամսարականների, Խոռխոռունիների, Մամիկոնյանների, Ամատունիների իշխանությունները, որոնք բաժանված էին միմյանցից նաև տերիտորիայով:

¹ Հմտ. Հ. Աճառյան, նույն տեղում, էջ 239:

Հայ արքունական տանը պատկանող կալվածքը կոչվում էր Ոստան: Արքունական կալվածքի մեջ մտնում էր Արարատյան գավառը՝ Արտաշատ և Վաղարշապատ քաղաքներով:

Երկրի ֆեոդալական մասնատումը բնականաբար պետք է ուժեղացներ հայոց բարրառների և համաժողովրդական ընդհանուր լեզվի մեջ եղած տարբերությունները: Սակայն, հայ ժողովրդի կյանքում կատարված այդ փոփոխությունները ուժեղացնում էին նաև ընդհանուր հաղորդակցության դեր կատարող լեզվի մշակման ու հղկման պրոցեսը. հայոց համաժողովրդական լեզուն ավելի ու ավելի էր մշակվում և ենթարկվելով տարբեր լեզուների ազդեցությունների, առավել ուժեղ չափերով էր սահմանազատվում բարբառներից՝ իբրև խոսակցական լեզու պահպանվելով գլխավորապես երկրի կենտրոնական մասում և նրան տերիտորիապես մոտ գավառներում: Այսպիսով, հայոց ընդհանուր լեզվի գոյության բոլոր շրջաններում եղել են տարբեր բարբառներ, որոնց առաջացումը կարելի է բացատրել միմիայն հայ ժողովրդի պատմությունը նկատի ունենալով. մինչդեռ հայերենի բարբառները մինչև այժմ ուսումնասիրված են առանց նկատի ունենալու հայ ժողովրդի բարբառախոս հատվածի պատմությունը, այդ պատճառով էլ ճիշտ չեն մեկնաբանվել ինչպես բարբառների գոյացման, նույնպես և բարբառների դասակարգման հարցերը: Հակագիտական և հակապատմական է այն տեսակետը, որի կողմնակիցները գտնում են, որ բարբառները հանդիսանում են առանձին լեզուների մնացորդներ կամ պնդում են, թե «նախկին տոհմական լեզուների խիստ փոփոխված վերապրուկները դառնում են հայերենի բարբառները»:¹ Սխալ է նաև այն մոտեցումը, երբ հայոց լեզվի, ինչպես նաև հայերենի բարբառների զարգացումը դիտվում է իբրև հարթ ու համաչափ պրոցես, բարբառները համարվում են լեզվական պրոցեսի բնական հետևանք, ինքնաբերաբար առաջացած լեզվական իրողություն: Այդ տեսակետի վրա կանգնած մարդիկ կարծում են, որ հայերենի բարբառները առաջացել են մեր թվականության 5-րդ դարից հետո՝ գրաբարից բաժանվելու եղանակով: Սակայն այդ կարծիքի դեմ են խոսում և՛ գրաբարի լեզվական իրողությունները, և՛ պատմական փաստերը:

5-րդ դարում բարբառների գոյություն ունենալու մասին հայ մատենագիրները բավականաչափ հիմնավոր փաստեր են տալիս. 'Կորյունն իր ուսուցչի՝ Մեսրոպ Մաշտոցի խոշոր գործերից մեկը համարում է նաև այն լուսավորական աշխատանքը, որ նա տարել էր տարբեր բարբառներով խոսող հայկական ցեղերի մեջ. «Յայնժամ վաղվաղակի հրաման առեալի թագաւորէն սկիզբն առնելոյ զլուսադուռ կողմանսն Մարաց, որք ոչ միայն վասն դիւական սատանայակիր բարուցն ճիւղողութեան, այլև վասն խեցքեկադոյն և խոշորագոյն լեզուին՝ դժուարամատոյցք էին»: Ինչպես երևում է Կորյունի վկայությունից՝ Հայաստանում հինգերորդ դարում կար «դժուարամատոյց» բարբառ, որով խոսում էին Մասիս լեռան հյուսիս-արևելյան կողմից, Շարուրի դաշտից մինչև Նախշուան ընկած տարածության վրա բնակված հայերը. այն կարծիքը, թե այդ շրջանի, ինչպես նաև Սյունյաց աշխարհի բնակիչները (որոնց մեջ նույնպես Մեսրոպ Մաշտոցը լուսավորական գործունեություն է տարածում) հայեր չէին, որևէ հիմքից զուրկ է, պատմական փաստերին հակառակ: Բարբառների գոյության մասին խոսում

¹ Տես Ա. Ղաբրյան — «Համառոտություն հայ բարբառագիտության», 1941 թ. էջ 23. Նույնի «Հայ բարբառագիտություն», 1949 թ., էջ 36—37:

են նաև հինգերորդ դարի այլ պատմիչներ. Եզնիկը տարբերում է իր գրած լեզուն ստորենայգ հայերենից. «Յորժամ մեք ասեմք՝ թէ սիմ շնչէ, ստորենայգ ասեն՝ այս շնչէ». ինչպես երևում է Եզնիկի վկայությունից, նույնիսկ տարբերություններ է եղել Եզնիկի գրած լեզվի և «ստորենայց» բարբառի քառապաշարի մեջ: Կորյունի և Եզնիկի վկայությունները հաստատվում են այլ փաստերով. Դիոնիսիոս Թրակացու հունարեն քերականության հայ թարգմանիչները, հունարեն բարբառային ձևերի համապատասխան նշում են հայերենի բարբառների համապատասխան ձևեր. Մանեճի փոխարեն Մանայճ, բայերի անձմ վերջավորության փոխարեն Լմ վերջավորությունը և այլն:

Բարբառների գոյության մասին ավելի ընդարձակ տեղեկություններ է տալիս Ստեփանոս Սյունեցին: Նա իր քերականության մեջ նշում է, թե որևէ լեզվի կատարելապես տիրապետելու համար անհրաժեշտ է իմանալ շրջակա ժողովուրդների լեզուները, հին լեզուները և իր լեզվի բարբառները: Նա շատ պարզ կերպով զանազանում է լեզվի բարբառները օտար լեզուներից. նա գրում է. «Եւ դարձեալ զքո լեզուիդ գիտելն զբովանդակ զբառսն զեզերականս, որպէս զԿորճայն և զՏայեցին և զԽութայինն և Չորրորդ—հայեցին և զՍպերացին և զՍինին և զԱրծխայինն, այլ մի՛ միայն զՄիջերկրեայսն և զՈստանիկսն, վասն զի պիտանիք այսոքիկ են ի տաղաչափութեան, այլև օգտակարք ի պատմութիւնսն, զի մի՛ վրիպեսցի անընդել գոլով լեզուացն»¹ Ինչպես երևում է Սյունեցու վկայությունից, իր ժամանակ տարբերվել են միջերկրեա և ոստանիկ լեզու, որը, հավանաբար, ունեցել է իւր խոսվածքներն ու բարբառները, որոնք նրա հաշվումով յոթն են: Այսպիսով ութերորդ դարում (Սյունեցին մեռել է 735 թվին) Հայաստանում եղել են մի շարք բարբառներ, որոնք իհարկե չէին կարող առաջացած լինել պրաբարից՝ 5-րդ դարից հետո: Սյունեցու այս վկայությունից ոմանք եզրակացնում են, թե այդ ժամանակ Հայաստանում եղել են օտար ցեղեր, որ իբր թե Սյունեցու հիշատակած բարբառները ոչ թե հայերենի բարբառներ են, այլ տարբեր լեզուներ: Այդ տեսակետը հերքվում է հենց Սյունեցու վկայությամբ. Սյունեցին տարբերում է շրջակա ազգերի լեզուները, որոնց գիտենալը շատ օգտակար է համարում. «Արդ, լեզուս ասէ, որ շուրջ զքե սահմանակիցք աշխարք իցին, գիտութիւն լեզուաց նոցա, վասնզի կարի օգտակարք են այսք առ ստուգաբանութիւն»² Այս սահմանակից լեզուներից բացի, նա, ինչպես տեսանք, զանազանում է նաև սեփական լեզուն իր բարբառներով. «Չքո լեզուիդ զբառսն զեզերականսն», որոնց գիտենալը նույնպես անհրաժեշտ է համարում: Այստեղից պարզ երևում է, որ նա տարբերում է օտար լեզուն և սեփական լեզվի բարբառները, այլապես նա չէր ասի զԴ լեզուիդ, որով ընդգծում է սեփական լեզվի բարբառը: Եվ վերջապես, եթե այդ բարբառները լինեին օտար լեզուներ՝ հինգերորդ դարի մեր պատմիչները լռության չէին կարող մատնել դրանց. մանավանդ երկու-երեք դար հետո է այդ առթիվ հիշատակում Սյունեցին:

Սակայն այդ պատմական փաստերը հաստատվում են նաև գրաբարի լեզվական տվյալներով. հայտնի է, որ հինգերորդ դարի առաջին կեսին և դրանից հետո գրված գործերի լեզվի մեջ բառապաշարային և քայական ձևերի զգալի տարբերություններ են նկատվում. օրինակ՝ աղոթել, ողջունել, աւփի,

¹ Աղոսն Ն.— «Дионисий фракийский и армянские толкователи», էջ 187:

² Աղոսն ց, նույն տեղում, էջ 187:

փառքամ, տոռնել, սաղարք, տոփանֆ, հրեվել, զեղջուկ, փեթակ և բազմաթիվ այլ բառեր չկան 5-րդ դարի առաջին կեսում դրված գործերում: Այդ բառերը, իհարկե, նոր չստեղծվեցին. դրանք կային հայերենի տարբեր բարբառներում, բայց հինգերորդ դարի մեր մատենագիրները կամ ծանոթ չեն եղել դրանց կամ չեն ուզեցել գործածել այդ «բարբառային» բառերը: Դիոնիսիոս Թրակացու քերականության հայ մեկնիչները նշել են նաև հնչյունական տարբերություններ առանձին բառերի արտասանության մեջ. օրինակ՝ Անանուն մեկնիչը վկայում է բսզուկ բառի պազուկ, փազուկ բարբառային ձևերը: Զգալի չափով տարբերվել է նաև բարբառների ու ընդհանուր լեզվի քերականությունը, ինչպես նաև բառապաշարը, որոշ բարբառներում գործածվել են այնպիսի բառեր, որոնք հատուկ չեն եղել բոլոր բարբառներին. ինչպես անծեղ և կաշաղակ, խլուրդ և ամբուտ, երկվորյակ և ջամուկ, դրացի և հաբեան, հաբակաշ, հաբաղառ և այլն: Այդպիսի տարբերություններ արտահայտվել են նաև գրաբարի խոնարհման մեջ, ինչպես՝ բնակիմ—բնակլմ, ջեռանիմ—ջեռնում, լսուցանեմ—լսեցուցանեմ և այլն, բառերի հոմանիշների առատության, միևնույն բառը տարբեր ձևով հոլովելու և լեզվական այլ իրողությունների մեջ և այլն: Այդ բոլոր փաստերը ցույց են տալիս, որ ինչպես հայ էթնիկական լեզվի կազմավորման, նույնպես և նրա զարգացման հետագա շրջանում Հայաստանում եղել են տարբեր բարբառներ, որոնք ավելի կամ նվազ չափով մոտ են եղել համաժողովրդական լեզվին և շարունակելով իրենց գոյությունը՝ հասել են մինչև մեր օրերը:

Հասկանալի է, որ հայ ժողովրդի պատմության զանազան շրջաններում բարբառները համաժողովրդական ընդհանուր լեզվի նկատմամբ տարբեր դիրք են ունեցել: Տիգրան երկրորդի թագավորության և նրանից հետո որոշ շրջանում թևերև տեղական խոսվածքներից շատերը ավելի մոտ են եղել ընդհանուր լեզվին, իսկ երբ ուժեղացել են ֆեոդալական հարաբերությունները և ստեղծվել են առանձին ինքնուրույն գավառներ, այդ խոսվածքներն ու բարբառները ավելի են հեռացել ընդհանուր լեզվից: Որքան սերտ են կապված եղել միմյանց հետ հայ ժողովրդի զանազան հատվածները, այնքան տարածված ու ժողովրդի հասկանալի է եղել ընդհանուր լեզուն. և ընդհակառակը, որքան ընդգրծվել են ֆեոդալական առանձին տների տարբերություններն ու տերիտորիալ սահմանները, այնքան որոշակի են դարձել համաժողովրդական լեզվի և բարբառների տարբերությունները:

Գ. ԳՐԱԲԱՐԻ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ՄԱՀԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Հայ ժողովրդի կյանքում պատմական խոշոր նշանակություն ունեցող դեպքեր են կատարվում 4-րդ և 5-րդ դարերում: Զորորդ դարի սկզբներին Հայաստանում քրիստոնեությունը պաշտոնական կրոն է հայտարարվում, իսկ նույն դարի վերջերին կատարվում է հայոց գրերի գյուտը, որը հայ գրականության ու հայ կուլտուրայի զարգացման խոշորագույն խթաններից մեկը դառնալով՝ մեծապես օժանդակում է նաև հայ եկեղեցուն՝ քրիստոնեական վարդապետությունը տարածելու և իր ազդեցությունը խորացնելու համար. գրերի գյուտից հետո հայ հոգևորականությունը ֆեոդալական պետության օժանդակությամբ ստեղծում է նոր գրականություն, որն արտացոլում էր հայ ֆեոդալական պետության և եկեղեցու շահերն ու քաղաքական ձգտումները և տար-

բերվում էր ավանդական բանահյուսությունից ու, Մ. Աբեղյանի խոսքերով ա-
սած, Քմի գենք էր կուլտուրական պայքարի ու մաքառման համար ընդդեմ
պարսիկների, ապա հույների և արաբների: Նույն նպատակին ծառայում էին
իսկապես նաև թե՛ քրիստոնեական-կրոնական ոգու և գաղափարախոսության
ծավալումը և թե՛ մաքուր կրոնական գրվածքները, քանի որ սրանք էլ վերջին
հաշվով մաքառելու միջոցներ էին ընդդեմ հեթանոսության—պարսիկների և ա-
րաբների, իսկ դավանաբանական երկերը՝ ընդդեմ հույների»¹ Սակայն քրիս-
տոնեական դավանաբանական գրականությունից բացի, հիմք է դրվում նաև
հայ պատմական, փիլիսոփայական, գրական ինքնուրույն գրականության, որը
թեև գտնվում էր եկեղեցու վերահսկողության տակ, բայց և այնպես չէր նույ-
նանում զուտ կրոնական գրականության հետ: Այդ նոր գրականության լեզուն
դառնում է հայոց համաժողովրդական լեզուն, որը հայ քաղաքական իշխանու-
թյան վեց հարյուր տարվա գոյության պայմաններում զարգացել, մշակվել էր
այն աստիճան, որ կարող էր բավարարել հայ եկեղեցական ինքնուրույն և
թարգմանական, ինչպես նաև պատմագրության և այլ ժանրերի գրականության
պահանջները և առանց որևէ դժվարության արտացոլել հայ ժողովրդի քաղա-
քական և կուլտուրական կյանքում կատարված փոփոխությունները: Այդ լե-
զուն եկեղեցուն սպասարկելով հանդերձ շարունակում է մնալ հայ համաժողո-
վրդական լեզու, որով դեռ երկար ժամանակ գրվել են պատմական և այլ եր-
կեր, ասեղծվել է հայկական հին գրականությունը, զարգացել է հայ կուլտու-
րան: Նա հանդիսացել է հայ ժողովրդի ամբողջության պահպանման ամենա-
ուժեղ գործոններից մեկը: Ծիշտ է, որ գրավոր գրականությունից և լեզվից զատ
հայ ժողովուրդը ունեցել է նաև իր անգիր բանահյուսությունը, իր տերիտորիալ
բարբառները, բայց նրանք հայ ժողովրդի կյանքում չեն խաղացել այն դերը,
ինչ որ գրաբարը և հայ գրավոր գրականությունը:

Այժմ, երբ մենք խոսում ենք գրաբարի և մեր հին գրականության մասին,
երբեք էլ չենք ուզում նսեմացնել նրանց պատմական դերը, փակել նրանց
օգտագործման ճանապարհները: Այգ ըստը հատուկ էր միայն Մառի երբեմնի
մոլի հետևորդներին, որոնք մեր հին կուլտուրայից ու լեզվից հրաժարվելու
փորձեր էին ևկատարում, գրաբարը համարում էին ֆեոդալական լեզու, հետևա-
բար նրանով գրված ամբողջ գրականությունը տալիս էին իշխող դասակար-
գին: Նրանք ելնելով Մառի լեզվի նոր ուսմունքի հակադիտական դրույթներից
բոլոր գրավոր լեզուները, որոնց թվում նաև գրաբարը, համարում էին իշխող
դասի ստեղծագործություն. պրոֆ. Ա. Ղարիբջանը, օրինակի համար, իր «Հա-
մառոտություն հայ բարբառագիտության» աշխատության մեջ գրում է. «Գրա-
բար լեզուն եղել է ընդհանուր լեզու պետության կառավարողների համար, պե-
տության նշանավորների համար, երկրի այդ ժամանակվա տերերի համար,
այսինքն ազնվական դասի համար»²:

Միայն ընկեր Ստալինի հանճարեղ աշխատությունների շնորհիվ բացա-
հայտվեցին այդ հակադիտական-հակապատմական տեսակետները: Ընկեր
Ստալինը գիտական բացառիկ խորությամբ ցույց տվեց, որ լեզուն «ստեղծված
է ոչ թե մեկ որևէ դասակարգի, այլ ամբողջ հասարակության, հասարակության
բոլոր դասակարգերի կողմից, հարյուրավոր սերունդների ջանքերով: Այն

¹ Մ. Աբեղյան, «Հայոց հին գրականության պատմություն», հ. 1, էջ 81:

² Ա. Ղարիբջան, «Համառոտություն հայ բարբառագիտության», էջ 93:

ստեղծված է բավարարելու համար ոչ թե միայն մեկ որևէ դասակարգի, այլ ամբողջ հասարակության, հասարակության բոլոր դասակարգերի կարիքները»,¹ որ նա «արդյունք է մի ամբողջ շարք դարաշրջանների»,² ապրում է ավելի երկար, քան որևէ բազիս կամ վերնաշենք: Լեզուն իբրև հաղորդակցության միջոց «հավասարապես սպասարկում է հասարակության բոլոր դասակարգերին և այդ տեսակետից յուրատեսակ անտարբերություն է ցույց տալիս դասակարգերի նկատմամբ: Բայց մարդիկ, սոցիալական առանձին խմբերը, դասակարգերը ամենևին էլ անտարբեր չեն եղել լեզվի նկատմամբ»³: Սոցիալական առանձին խմբերը անտարբեր չէին նաև գրաբարի նկատմամբ և ձգտում էին օգտագործել այդ լեզուն իրենց շահերի համար. ահա թե ինչու հին հայերենը, երբ հայոց գրերի գյուտը կատարվելու հետևանքով դառնում է գրական լեզու և զարգացման նոր շրջան է թևակոխում, սկսում է մշակվել ու հղկվել ժամանակի մտավորականության կողմից և օգտագործվել հայ եկեղեցու կողմից իբրև եկեղեցու, սուրբ գրքի գրավոր լեզու: Հայ հոգևորականությունը և իշխող դասակարգի ներկայացուցիչները ձգտում էին լրիվ չափով սեփականել այդ լեզուն. հայ եկեղեցին իր ձեռքն է վերցնում կրթության ու գրականության գործը. բացում է դպրոցներ, պատրաստում այնպիսի մտավորականություն, որը սովորում էր պաշտպանել եկեղեցու շահերը, հինգերորդ դարի սկզբներին թարգմանվում է Աստվածաշունչը, գրվում են նաև ինքնուրույն դավանաբանական գործեր, որոնք բոլորն էլ համապատասխանում էին եկեղեցու ձգտումներին: Դրան զուգընթաց ավելի է մշակվում գրաբարը, որի հետևանքով այդ լեզուն ավելի ու ավելի է սահմանազատվում վիպասանական շրջանի բանավոր գրականության լեզվից, թուլանում է ժողովրդական բանահյուսության ու գրավոր դրականության, հետևաբար նաև ժողովրդական խոսակցական լեզվի ու գրաբարի կապը: Սակայն այդ բոլորով հանդերձ գրաբարը դեռևս սպասարկում էր հայ ժողովրդին իբրև նրա ընդհանուր գրական լեզու. նրանով շարունակվում են գրվել պատմական և այլ ինքնուրույն ստեղծագործություններ: Եվ միայն այն ժամանակաշրջանից, երբ հայ Արշակունյաց թագավորությունը վերանալուց հետո (428 թ.) Հայաստանը երկար ժամանակ զրկվում է պետականությունից, ենթարկվում է արաբական արաշավանքներին, և խախտվում է հայ ժողովրդի տարբեր հատվածների միջև եղած տնտեսական սերտ մերձակցությունը, հայոց համաժողովրդական գրական լեզուն՝ գրաբարը սկսում է աստիճանաբար դեգրադացիայի ենթարկվել, անհասկանալի դառնալ ամբողջ հայ ժողովրդին և զրկվել իր համաժողովրդական հաղորդակցական ֆունկցիայից ու դրանով իրեն դատապարտել մահացման:

Այսպիսով գրաբարը, որ մեր թվականության 4—5-րդ դարերից առաջ համընկնում էր հայ ժողովրդի որոշ հատվածի խոսակցական լեզվին, հայ գրերի գյուտից հետո դառնում է գրավոր լեզու և հետզհետե ավելի ու ավելի ենթարկվելով գրական մշակման՝ հեռանում է ժողովրդի խոսակցական լեզվից և դառնում իշխող դասերի կողմից նրանց մոնոպոլ շահերի համար օգտագործվող միջոց: Սակայն, չնայած այն հանգամանքին, որ գրավոր լեզու դառնալու հենց սկզբից գրաբարն իր մեջ կրում էր իր վերասերման տարրերը, որոնք ժա-

¹ Ի. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», էջ 14—15:

² Նույն տեղում, էջ 18:

³ Նույն տեղում, էջ 28:

մանակի ընթացքում հետզհետե ավելի ու ավելի ուժեղացան և այդ լեզուն ի վերջո դարձրին ժողովրդի կյանքից կտրված, զուտ գրքային լեզու, այնուամենայնիվ չպետք է անտեսել այն մեծ գերը, որ իր ժամանակ կատարել է գրաբարը. երբեք չի կարելի մոռանալ, որ գրաբարով ստեղծվել է հայ ժողովրդի կուլտուրայի մի ամբողջ շրջան, որ տևել է երկար դարեր:

Գրաբարը մահանալուց հետո աշխուժանում են հայերենի մի շարք բարբառներ և գրական նոր լեզվի՝ միջին հայերենի գոյացման սկիզբն են դնում: Այդ նոր լեզվով, որի կազմավորման պրոցեսը սկսում է 10-րդ դարից, գրվել են գեղարվեստական, գիտական և պատմական բազմաթիվ գործեր: Այդ ստեղծագործությունների մեջ իրենց լեզվի պարզությունը ու գրավշովյամբ հատկապես աչքի են ընկնում գեղարվեստական երկերը, որոնց զգալի մասը ազատ է միջնադարյան սխոլաստիկ գաղափարախոսության ազդեցությունից: Նույնիսկ 10-րդ դարի հայ միստիկ գրող Գրիգոր Նարեկացին իր մի շարք տաղերում դուրս է գալիս եկեղեցու ազդեցությունից և բնություն ու սեր է երգում: Սակալն ոչ միայն այդ. նա իր տաղերը շարադրում է գրաբարի օրինաչափությունների դեմ զգալի չափով մեղանշող լեզվով. օրինակ՝

«Այդ սօս ու տօսախ ծառերդ
Վարդագոյն ոստս արձակեցին:

Կամ՝

Եթե սամիքն են արծաթի, լուծն էր ոսկի,
Եւ ամառտիք ապրշիմի.

Փոկեր շարած շարանըման հոյլ մարգարիտ...»¹

Զխոսելով բերված օրինակների շարահյուսության մասին, որը լրիվ չափով համընկնում է մեր բարբառների շարահյուսության հետ՝ պետք է նշենք, որ եւ հոգնակի վերջավորությունը (ծառեր, փոկեր), ու շաղկապը, ան վերջածանցը (փոկեր շարած), ինչպես նաև բառերի զգալի մասը (սամոտիք, ապրշիմի և այլն) գործածական են միայն բարբառներում և ժամանակակից հայերենում: Սակալն այդ բոլորով հանդերձ Գրիգոր Նարեկացու լեզուն շատ հեռու էր միջին հայերենից. նա ստեղծագործում էր գրաբարով, թեև նրա ոճն ու արտահայտչական միջոցները զգալի չափով տարբերվում էին հինգերորդ դարի հայ հեղինակների ոճից և արտահայտչական միջոցներից: Գրիգոր Նարեկացուց հետո հանդես եկած գրողները ավելի պարզ ու հասկանալի լեզվով են գրել: Նեոսես Շնորհալու, Ֆրիկի, Հովհաննես Երզնկացու, Կոստանդին Երզնկացու, Մխիթար Գոշի, Վարդան Այգեկցու, Նաղաշ Հովնաթանի և մյուսների երկերի լեզուն երբեք չի կարելի համեմատել Գրիգոր Նարեկացու լեզվի հետ. նրանց լեզուն պարզ է, մեկին և չափազանց հյուսթեղ:

Սակայն շնայած դրան միջին հայերենը չի ունեցել իր կայուն օրինաչափությունները և տարբեր գրողների մոտ տարբեր է եղել իր շատ դրսևորումներով: Եվ այդ հասկանալի է. միջին հայերենը թեև գրականության լեզու է դառնում, նրանով նույնիսկ գրվում են պաշտոնական փաստաթղթեր և Ռուբինյանց հայ թագավորության շրջանում պաշտոնապես ճանաչվում է իբրև պետական լեզու, քայց և այնպես իր բոլոր իրողություններով չի կայունանում և իր լիներիության պրոցեսից դուրս չի գալիս, որովհետև հայ ժողովրդի պատմական

¹ Հ. Հովնանյան, «Հիտապոտությունը նախնայանց ուսմանը ներկայացնող վրաս», էջ 251

կյանքում կատարված տեղաշարժերը հնարավորություններ չեն ասեղծում այդ լեզվի հետագա մշակման ու կատարելագործման համար:

Միջին հայերենի կազմավորման շրջանում գրաբարը, որը արդեն անհասկանալի լեզու էր դարձել, սկսում է ավելի ձևափոխվել որոշ գրողների, գլխավորապես հայ ֆեոդալական հարաբերությունների և եկեղեցու հետ կապված մատենագիրների կողմից և խճողվել արվեստական բառերով ու հայերենին օտար քերականական իրողություններով, վերածվել մանվածապատ կաստայական մի գրավոր լեզվի, որի դասական օրինակը մենք հանդիպում ենք 10—12-րդ-դարի հայ մի շարք մատենագիրների մոտ, ինչպես, օրինակ՝ Գրիգոր Մագիստրոսի Մրգուզ փաճաճը, որը թարգմանել է պրոֆ. Հ. Աճառյանը և հրատարակել «Հանդես ամսօրյայում» (1923 թ., էջ 241—256). ահա այդ գործից մի երկու օրինակ.

«Մրգուզ փանաք ծրդեալ ծեքեալ՝ անհոյժ ոգեալ, յառեալ,
իրազեկ՝ խանտեալ, մանձրեալ, յարազինեալ, իսկոյն յահրեալ,
Մանշուկ մանշոն ճահճեալ, դամեկեալ, ըմբահակեալ,
Դիրադատ պատահեալ, անուհամար պարայածեալ,
Որջասոյզ և գրուանող ծեքեալ, նոծեալ, ապազոնեալ...»¹

Այսպիսի լեզվով գրված գործերը անհասկանալի էին նույնիսկ ժամանակի բարձր մտավորականությանը, էլ չենք ասում հայ ժողովրդի հոծ զանգվածներին. բնական է, որ այդ լեզվով երբեք չէր կարող զարգանալ հայ կուլտուրան ու գրականությունը. նա միայն կարող էր արգելքներ հարուցել հայ ժողովրդի կուլտուրայի զարգացման դեմ:

Այս բոլորից հետևում է, որ հայ ժողովրդի կյանքում կատարված փոփոխությունների հետևանքով գրաբարը, որը երկար ժամանակ իբրև ընդհանուր հաղորդակցական միջոց է ծառայել հայ ժողովրդի տարբեր հատվածների համար, միջին դարերում աստիճանաբար կորցնում է իր ընդհանուր հաղորդակցական ֆունկցիան և սկսում է խճողվել արվեստական բառերով ու ձևերով, օգտագործվել գլխավորապես հայ եկեղեցու հետ կապված մտավորականության կողմից, սպասարկել եկեղեցուն և դրանով իրեն դատապարտել մահացման: Լեզուն, — ուսուցանում է ընկեր Ստալինը, — ստեղծված է հենց նրա համար, «որպեսզի ծառայի հասարակությանը՝ իբրև ամբողջության, որպես մարդկանց հաղորդակցման գործիք, որպեսզի ընդհանուր լինի հասարակության անդամների համար և միասնական՝ հասարակության համար, որպեսզի հավասարապես սպասարկի հասարակության անդամներին, անկախ նրանց դասակարգային դրությունից»,² իսկ երբ լեզուն շեղվում է այդ համաժողովրդական գիրքից և կանգնում է «որևէ սոցիալական խմբի գերադասման ու աջակց-

¹ Խալիվ. Նայելով իմ պարզ ասածներին՝ ցնդարանում էիր, թե դրանք անպետք, դժուար և կեղտոտ բաներ են:

Իր իրազեկ եղար, նախանձով վառվեցիր, այրվեցիր և դենք առար, իսկույն իմ դես՝ հանդգնեցիր:

Իբրև մի մանուկ, մի փոքր տղա եղար ստահակ, ընդվզեցիր և բժրոստացար:

Հեշտ բան երեսց բեզ, բայց հիմա ճամփազ կորցրած՝ ման ես գալիս այս ու այն կողմ:

Որչիդ մեջ պահված գաղանի ցնդարանում էիր, հիմա պարսվեցիր:

Ի. Ստալին, «Սարքսիդար և լեզվաբանության հարցերը», էջ 17:

Տեղեկագիր 4—8

ման դիրքի վրա՝ ի վնաս հասարակության մյուս սոցիալական խմբերի»,¹ անխուսափելիորեն կորցնում է իր որակը, դադարում է հասարակության մեջ մարդկանց հաղորդակցության միջոց լինելուց և դատապարտվում է մահացման, ինչպես այդ կատարվեց գրաբարի հետ։

Այսպիսով, հայկական պետականության վերացման, արաբական արշավանքների բերած քայքայման և հայ ժողովրդի տարբեր հատվածների միջև եղած տնտեսական և կուլտուրական կապի թուլացման հետևանքով գրաբարը դադարում է համաժողովրդական լեզու լինելուց, աշխուժանում են հայերենի տերիտորիալ բարբառները և գրական նոր լեզվի՝ միջին հայերենի գոյության սկիզբն են դնում։ Բայց միջին հայերենի կազմավորման պրոցեսը չի ավարտվում և նա չի դառնում մեր ազգային լեզվի հիմքը։

Հայ ազգի կազմավորման հետ 17—18-րդ դարերում ուժ ճյուղի բարբառների (գլխավորապես Արարատյան բարբառի) հիման վրա սկսում է կազմավորվել հայոց ազգային լեզուն, որը իր օրինաչափություններով բավականաչափ կայունանում է միայն 19-րդ դարի երկրորդ կեսին։ Հայոց ազգային լեզվի կազմավորման ու ձևավորման շրջանում հայ հոգևորականությունը ավելի ուժեղ է կառչում գրաբարին և ամեն կերպ ձգտում է օգտագործել այդ լեզուն հայ ժողովրդի առաջավոր կուլտուրայի ու գրականության դեմ տարված պայքարում։

Դ. ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Լեզվաբանության հարցերի վերաբերյալ իր հանճարեղ աշխատությունների մեջ ընկեր Ստալինը բացառիկ պարզությամբ ու գիտական խորաթափանցությամբ ցույց տվեց լեզուների կազմավորման, զարգացման ու կատարելագործման ուղիները։ Ստալինյան լեզվաբանական ուսմունքի լույսի տակ պարզ դարձավ, որ ժամանակակից լեզուները իրենց տարրերով գալիս են շատ հնուց, որ երբ խոսվում է ժողովրդի ընդհանուր լեզվի և նրա բարբառների կամ ազգային լեզվի ու ժողովրդի հին գրավոր լեզուների մասին, չի նշանակում, թե դրանք օտար լեզուներ են և որևէ կապ չունեն միմյանց հետ։ Սակայն դրա հետ միասին չի կարելի նույնացնել տվյալ ժողովրդի բարբառներն ու տարբեր շրջանների համաժողովրդական լեզուները միմյանց հետ. նրանք բոլորը միասին մի ամբողջություն կազմելով հանդերձ՝ լեզվական տարբեր որակներ են, ժողովրդի զարգացման տարբեր շրջանների լեզուներ, որոնք առաջացել են «ոչ թե գոյություն ունեցող լեզվի ոչնչացման և նորի կերտման միջոցով, այլ գոյություն ունեցող լեզվի հիմնական տարրերի ծավալման ու կատարելագործման միջոցով»։²

Այս բոլորից հետևում է, որ երբ մենք խոսում ենք մեր ազգային լեզվի կազմավորման, մշակման ու կատարելագործման մասին, այդ երեք էլ չի նշանակում, թե բացառում ենք այն հսկայական դերը, որ նրա զարգացման մեջ խաղացել են գրաբարը և բարբառները։ Այդ չի նշանակում նաև՝ որ մեր ազգային լեզվի օրինաչափություններն ամբողջությամբ համընկնում են գրաբարի

¹ Ի. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», էջ 17։

² Նույն տեղում, էջ 80։

կամ բարբառների օրինաչափությունների հետ, ինչպես հակված են կարծիք ունենալ ընկերներից ոմանք: Լեզուն չի կարող միշտ միևնույն աստիճանին մնալ. նա զարգանում ու փոփոխվում է: Հասարակական կյանքի, արտադրության ու կուլտուրայի առաջընթացը մեծ փոփոխություններ են մտցնում լեզվի մեջ: Լեզուն կատարելագործվում է հասարակության զարգացման հետ: Սակայն նա զարգանում է, մի որակից մի այլ որակի է անցնում՝ «ո՛չ թե պայթյունի միջոցով, ո՛չ թե հնի միանգամյա ոչնչացման և նորի կառուցման միջոցով, այլ լեզվի նոր որակի, նոր կառուցվածքի տարրերի աստիճանական և տեղական կուտակման միջոցով, հին որակի տարրերի աստիճանական մահացման միջոցով»¹ Լեզվական նոր որակը հնից շատ ու շատ կարող է տարբեր լինել, ինչպես գրաբարն ու ժամանակակից հայերենը: Լեզվական նոր որակի տարրերի աստիճանական կուտակումը կարող է տեղի ունենալ ժողովրդական ընդհանուր լեզվի, բարբառների կամ առանձին բարբառի հիման վրա:

Ժողովուրդների զարգացմանը և ազգ դառնալուն զուգընթաց կազմավորվում են ազգային լեզուները, որոնք իրենց մեջ ընդունում են լեզվական այն բոլոր իրողությունները, որ ստեղծվելով այդ լեզուն կրող ժողովրդի դարավր պատմության ընթացքում՝ չեն կորցրել իրենց կենսունակությունը և ընդհանուր, համաժողովրդական նշանակություն ունեն: Ամենից առաջ պահպանվում են բառապաշարի հիմնական ֆոնդը և քերականական այն փաստերը, որոնք հասկանալի են տվյալ շրջանի հասարակության բոլոր անդամներին: Սակայն այդ կենսունակ իրողությունները բոլոր դեպքերում և տարբեր պայմաններում միակերպ հանդես չեն կարող գալ. նայած թե ինչպիսի պայմաններում է կազմավորվում ազգը և ազգի լեզվի հիմքում բարբառն է ընկնում, թե՝ ժողովրդական ընդհանուր լեզուն, ըստ այնմ էլ նշվում են ազգի լեզվի զարգացման ու կատարելագործման ուղիները: Այսպես, օրինակ՝ հայոց ազգային լեզվի կազմավորման պրոցեսը սկսվում է 17—18-րդ դարերում՝ նրա զարգացման համար ստեղծված աննպաստ պայմաններում: Հայ ժողովուրդը գտնվում էր պարսկա-թուրքական անտանելի լծի տակ, խոշտանգվում ու հալածվում էր անընդհատ և այդ պատճառով էլ նրա կուլտուրան սկսում է զարգանալ հայկական գաղութներում, իսկ ազգային լեզվի կազմավորումը սկսում է ոչ թե մեկ բարբառի կամ համաժողովրդական ընդհանուր լեզվի, այլ ում և կը ճյուղի տարբեր բարբառների հիման վրա: Այսպես, օրինակ՝ Գրիգոր Դարանաղեցին 1630 թվին լեզվական տարբեր իրողություններով լի լեզվով գրում է իր ժամանակագրությունը, Զաքարիա Ազուլեցին 1647—1681 թվերին կը և ում ճյուղի բարբառների փաստերով շարադրում է իր օրագիրը, Առաքել Դավրիժեցին 1662 թվին աշխարհաբարի տարրերով հագեցված գրաբարով հորինում է իր պատմությունը, իսկ Հովհաննես վարդապետ Կոստանդնուպոլսեցին 1667 թվին, կարծեք թե տարբեր բարբառների և գրաբարի իրողությունների համալրությամբ մշակված լեզվով ստեղծում է իր «Պարզաբանութիւն հոգեհուազ Դավթի» աշխատությունը, որը ցույց է տալիս, որ նույնիսկ հոգևորականության մի մասը այդ ժամանակ իր հույսը գրաբարի վրա չէր դնում: 18-րդ դարում գրված գրքերի, ինչպես նաև պաշտոնական գրագրությունների մասին այստեղ ավելորդ է նույնիսկ խոսել, որովհետև այդ գործերում ավելի ուժեղ են արտահայտված աշխարհաբարի տարրերը:

¹ Խ. Ս տ ա լ ի ն, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը», էջ 61:

Այսպիսով, 17—18-րդ դարերում սկսում է հայոց ազգային լեզվի կազմավորման պրոցեսը: Սակայն սկզբնական շրջանում նա սկսում է զարգանալ ոչ թե որևէ բարբառի հիման վրա՝ իբրև կայուն օրինաչափություններ ունեցող լեզու, այլ հանդես է գալիս քերականական ձևերի բազմազանությամբ՝ որոշ հինափոխի մոտ արևելյան, իսկ ոմանց մոտ էլ արևմտյան բարբառների իրողությունների գերակշռումով:

Հայաստանի մի զգալի մասը 19-րդ դարի առաջին քառորդի վերջերին միակցվում է Ռուսաստանին: Այդ ակտով ոչ միայն բարելավվում է Ռուսաստանի ազդեցության տակ անցած հայերի գրությունը, այլև համեմատաբար նպաստավոր պայմաններ են ստեղծվում հայ կուլտուրայի, գրականության ու լեզվի զարգացման համար: Արագանում է հայ ժողովրդի իբրև ազգ ձևավորվելու պրոցեսը Հայաստանի արևելյան հատվածում. հայոց ազգային լեզուն սկսում է զարգանալ ու կատարելագործվել ռւս ճյուղի բարբառների, գլխավորապես Արարատյան բարբառի հիման վրա: Հայկական նոր ինտելիգենցիան, որը սնվում էր ռուսական առաջադեմ գրողների իդեաներով, լայն պայքար է ծավալում այդ նոր լեզվի հաղթանակն ապահովելու և նրա մշակման ուղիները նշելու համար: Այդ պայքարի մեջ մեծ դեր են կատարել Խ. Աբովյանը և հայ ռևոլուցիոն դեմոկրատ Մ. Նալբանդյանը:

Խ. Աբովյանը իր գործունեությունը սկսում է այնպիսի շրջանում, երբ արդեն առկա էր հայոց ազգային լեզուն, բայց դեռևս «անպատիվ էր», դեռ շատերը չէին համարձակվում գրել այդ լեզվով. այդ պատճառով էլ նա ամենից առաջ աշխատում էր վերականգնել աշխարհաբարի պատիվը, ամրացնել այդ լեզուն դրականությամբ, ժողովրդին հաճելի և հասկանալի գրականության սկիզբը դնել, «հարիր հազարի» լեզվով «սրտի բան գրել», որ ամեն մարդ կարդար ու հասկանար, որ հայի «սիրտն էլ ուրիշ ազգեր իմանային» և գովելն նրան ու նրա լեզուն սիրելն, իսկ իր «ազիզ ազգը» սեփական հերոսների քաջագործություններն ու լեզուն թողած այլ լեզուներով չհրապուրվեր: Այդ խնդիրներով էր պայմանավորված գրաբարի և նրա պաշտպան հայ հոգևորականության դեմ ուղղված նրա հետևողական պայքարը: Աբովյանը գտնում էր, որ «շափից շատ բարձր կարծիք ունենալով իրենց դասի առավելությունների մասին՝ հոգևորականները գրել և մշակել են այնպիսի բաներ, որ ոչ մի կապ չունի ժողովրդի և ժամանակի ոգու հետ»¹, որ հոգևորականությունն իր սեփականությունը դարձնելով հին գրական լեզուն, ինչպես իրենց դասակիցները մյուս ազգերի մեջ, սկսեց «այդ լեզուն էգոիստորեն դարձնել եգիպտական գաղտնիք, որպեսզի ժողովրդի աչքում ավելի դիրք ու ակնածություն ձեռք բերի»² Սակայն հին հայերենը կերպարանափոխվել է և չի կարող դառնալ այն միջոցը, որով «մի մարդ իր ներքին հոգեվիճակն է արտահայտում այլ մարդկանց, առանց որի ոչ անհատը, ոչ էլ մանավանդ ժողովուրդը ի վիճակի չէ մտքերն ու զգացմունքները հաղորդելու ուրիշներին, մանավանդ ավանդելու հաջորդ սերունդներին»³ Հին հայերենը իր դարն ապրել է և որքան էլ նա «իր արտակարգ հարստության, իր կատարելության և իր գրական արժեքի կողմից բարձր լինի, այնուամենայնիվ, այդ լեզուն է միակ արգելակող պատճառը, որ խեղճ ժողովուրդը մինչև հիմա

¹ Խ. Աբովյան, «Նախաշավիղ», էջ XLII. (Ժանոթ. թարգմանված է ղերմաներեն տեքստից):

² Նույն տեղում, էջ XLII:

³ Նույն տեղում, էջ XXXIX:

զուրկ է մնացել զարգացման միջոցներից»¹ Հոգևորականության ու նրա սեփականած գրաբարի դեմ Աբովյանի տարած պայքարը ոտքի է հանում հին սերնդի ներկայացուցիչներին, որոնք միացած հայ հոգևորականության հետ, իրենց ամբողջ ուժերը ուղղում են Աբովյանի դեմ: Բայց Աբովյանը չի ընկերկում և շարունակում է պայքարը՝ հաստատ համոզված լինելով, որ ճշմարտությունը վերջիվերջո կհաղթանակի և իր «ազիզ ազգը» կգնահատի հայոց աշխարհաբար լեզվի իրավունքները պաշտպանող և հայ նոր գրականության հիմնաքարերը գնող իր որդու անգնահատելի աշխատանքը:

Հայոց աշխարհաբար լեզվի հաղթանակի համար Աբովյանի սկսած պայքարն իր ավարտին է հասցնում ռեուլուցիոն դեմոկրատ Մ. Նալբանդյանը: Նա ոչ միայն մերժում է գրաբարը և հիմնավորում աշխարհաբարի անհրաժեշտությունը, այլև գործուն մասնակցություն է ունենում աշխարհաբարի մշակմանն ու կատարելագործմանը, մարտնչում է աշխարհաբարը «տիրացուի շիւսփլավ» շինողների դեմ, հետևում է «մայրենի «նորախոսությունը», «միշտ շափի ու կշռի» տակ առաջ տանելով ինչպես «Հյուսիսափայլի», նույնպես և «ուրիշների գրչով առաջացած նորախոսությունն էլ»: Նշելով գրական հայերենի մշակման ուղիները, նա գտնում էր, որ աշխարհաբարը այնպես պետք է մշակել, որ այս կամ այն բարբառի լծի տակ չմնա, որովհետև «նոր լեզուն այս կամ այն բարբառի լծի տակ, դրականապես, մշակելու գաղափարը նույնպես ամուլ և անգործագրելի է, ինչպես հին լեզվի գաղափարը, ինչպես սորա ստրկության տակ աճած նոր լեզվի գաղափարը: Այս տեսակ մշակությունը ինքն իրեն հակասում է նոր լեզվի մշակության գաղափարին, որ է ռեֆան կարելի է առավել շաա և առավել մեծ բազմությամբ հասկանալի կերպով խոսել»² Միայն հայոց լեզուն ինքնուրույնաբար մշակելով՝ կմնա հայ ժողովրդին հասկանալի, «ժամանակի հարկադրություններին» հարմար, կհամապատասխանի ժողովրդի պահանջներին, ճիշտ կարտացուլի նրա «կյանքի որպիսությունը» և կդառնա այն հարմարավոր անոթը, որով «մարդը թափում է իր միտքը իր նմանների մտքի մեջ»: Նալբանդյանը իր հիմնական ուղղությունը բեռնելով հայոց նոր լեզվի մշակման հարցերին և ուրվագծելով այդ լեզուն կատարելագործելու և հղկելու ուղիները՝ ինքը իր երկերում իրագործում էր տեսականորեն հիմնավորած իր դրույթները և ակտիվ կերպով մասնակցում նոր լեզվի շինարարությանը: «Հյուսիսափայլի» աշխատակիցների և առանձնապես Մ. Նալբանդյանի ջանքերի շնորհիվ 50—60-ական թվականներին զգալի չափով կայունանում են հայերենի օրինաչափությունները և հարթվում նրա զարգացման ուղիները:

Այսպիսով, հայոց աշխարհաբար լեզուն, հակառակ դեպի գրաբարը դրանքարչ տվող հայ պահպանողական մտավորականների ձգտումներին, Ռուսաստանում դաստիարակված ու ռուսական պրոգրեսիվ գործիչների գաղափարները որդեգրած հայ առաջադեմ ինտելիգենցիայի ջանքերի շնորհիվ 19-րդ դարում այնքան է մշակվում, կատարելագործվում ու հղկվում, որ կարողանում է բավարարել ժամանակի հայ գեղարվեստական և հրապարակախոսական գրականության պահանջները:

Հայոց ազգային լեզուն զարգացման նոր աստիճանի է բարձրանում 20-րդ

¹ Ն. Արովյան, «Նախաշավիղ» էջ XLI (ժանոթ. թարգմանված է գերմաներեն տեքստից):

² Մ. Նալբանդյան, Երկեր, հ. 2, էջ 437:

դարի սկզբներին, որովհետև հայ ժողովուրդը զարգացման նոր շրջան է թևակոխում. հայկական իրականության մեջ հանդես են գալիս նոր թերթեր և նոր գրականություն, որոնք հայ գրականության ու լեզվի մեջ բերում են այն լավագույնն ու կենսունակը, որ արդեն ստեղծել էր ռուս առաջավոր միտքը։ Ստալինի անմիջական ղեկավարությամբ ու մասնակցությամբ Անդրկովկասում կազմակերպվում է բոլշևիկյան մամուլի հրատարակության գործը. 1902 թվին Ռբիխիսիում լույս է տեսնում «Պրոլետարիատ» առաջին հայերեն անլեզալ «խսկ-բայական» ուղղության թերթը, որը 1903 թվին վրացական «Բրձոլա» թերթի հետ վերանվանվում է «Պրոլետարիատի կոփ» և լույս է տեսնում իբրև կոմկուսյան Միության անլեզալ օրգան՝ երեք լեզուներով (վրացերեն, հայերեն, ռուսերեն)։ ստեղծվում է «նոր աշխարհայացքով զինված, ռուսաց նորագույն ռևոլուցիոն ավազանում մկրտված»,¹ հայ ինտելիգենցիա, որը բացառիկ դեր էր կատարում հայոց լեզվի մշակման ու հայ գրականության զարգացման բնագավառում։

Լենինի, Ստալինի լավագույն աշակերտներն ու զինակիցները՝ Ստեփան Շահումյանը և Սուրեն Սպանդարյանն իրագործելով լենինյան «Խսկրայի» գաղափարները հայ իրականության մեջ և գլխավորելով հայ առաջավոր ինտելիգենցիայի գործունեությունը՝ օժանդակում էին հայ գրականության ու լեզվի զարգացմանը, պայքարում էին հայոց լեզուն աղավաղողների ու ծխական մտավորականության շահերին հարմարեցնողների, ազգային լեզուն դեպի գրաբարը քարշ տվողների դեմ։ Նրանք 1906 թվին հիմնում են «Կայծ», ապա «Նոր խոսք» և «Օրեր» թերթերը, որոնց հրատարակությունը թեև երկար չի շարունակվում, բայց մեծ դեր է կատարում հայոց լեզվի մշակման ու հայ գրականության զարգացման բնագավառում։ Ստ. Շահումյանը 1906 թվին «Կայծ» թերթի առաջնորդող հոդվածներից մեկում բնորոշելով հայ ժողովրդի կյանքում կատարված փոփոխությունները՝ ասում էր, որ հայկական նորագույն կյանքի «ամենաբնորոշ գիծը» այն է, որ «երևան է եկել այն աշխարհայացքը, որը կոչվում է սոցիալիզմ և որի կրողն է բանվոր դասակարգը, պրոլետարիատը», այդ դասակարգին առաջադրված են կարևոր և բարձր խնդիրներ, որոնք նա կարող է կատարել միայն բոլշևիկների պարտիայի և նրա օրգանի ղեկավարությամբ, որը «ուզում է քայլ առ քայլ հետևել ռևոլուցիոն պրոլետարիատին նրա հզոր կոչվում, որ ուզում է արտահայտել ու ղեկավարել այդ կոփը, որը ուզում է լուսաբանել այն փշոտ ու արյունոտ ճանապարհը, որով ընթանում է ռևոլուցիոն պրոլետարիատը»²։ Բնական է, որ այդ նոր աշխարհայացքն ունեցող հայ նոր ինտելիգենցիան, որը սնված էր ռուսական ռևոլուցիոն գրականությամբ և դաստիարակված բոլշևիկների պարտիայի շարքերում, չէր կարող հայոց լեզվի և հայ գրականության զարգացման հարցերն անջատել բանվոր դասակարգի պայքարի ընդհանուր հարցերից, որովհետև «կրթական» գործը ընդհանրապես և լեզվի գործը՝ մասնավորապես, — ասում էր Շահումյանը, — կարևոր զենքերից մեկն է կոչվող դասակարգի ձեռքին և ոչ մի դասակարգ այնքան տխմար չի գտնվի, որ կամովին տա իր ձեռքից այդ զենքը»³։ Միայն ռուսական ռևոլուցիայի բովով անցած, հայ բոլշևիկների ազդեցությամբ ստեղծված հայ ինտելիգենցիայի այն շերտը, որը, Տերյանի խոսքերով ասած, բարձր էր կանգնած

¹ Ստ. Շահումյան, «Լենինի երկեր», էջ 81

² Նույն տեղում, էջ 79—801

³ Նույն տեղում, էջ 3981

իր «աշխարհայացքով ծխական գործերից այն կողմը» շանցնող, իր «քաղաքական ասպարեզը ծխական դպրոցն ու եկեղեցին» համարող հայ տիրացուական մտավորականից, — հայ ինտելիգենցիայի միայն այդ շերտն էր ճիշտ պատկերացնում հայոց ազգային լեզվի ապագան և միայն նա էր պայքարում այդ լեզուն «դեպի նոր ափեր» հանելու համար։ Նա մշակում էր հայերենը, նկատի ունենալով նրա զարգացման հեռանկարները, այդ պատճառով իր հայացքը ոչ թե հառել էր դեպի անցյալը, այլ դեպի ապագան, մշակում էր հայերենը՝ ուսերենի զարգացման փորձը նկատի ունենալով և պայքարում էր նրա հետագա կատարելագործման, նրա հարստացման, ոճական հնարքների և լեզվական միջոցների ճկունության ու արտահայտչականության համար։

* * *

Սովետական իշխանության շնորհիվ մեր կուլտուրան ու լեզուն զարգացման աննախընթաց բարձրության են հասել։ Հայոց լեզուն դարձել է պետական լեզու։ Վերացել են մեր լեզվի առաջընթացին խանգարող խոչընդոտները։ Վերացել է ազգային ու գաղութային ճնշումը, ազգային մեկուսացումը. ազգերի փոխադարձ անվստահությունը փոխարինվել է փոխադարձ վստահությամբ և ազգերի մերձեցմամբ։ Կենսագործվել է ազգերի իրավահավասարությունը. հսպառ վերացվել է լեզուների ճնշման ու ասիմիլացիայի քաղաքականությունը և ազգային լեզուները ձեռք են բերել համագործակցելու կարգով միմյանց ազատորեն հարստացնելու հնարավորությունը։

Հայ ժողովուրդը ապրում է սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում, ժողովուրդներ, որոնց հետ նա կազմում է մի միասնական ու անբաժանելի միություն։ Սովետական բոլոր մյուս ժողովուրդների և առաջին հերթին ռուս մեծ ժողովրդի հետ հայ ժողովուրդը կապված է տնտեսության, կուլտուրայի և գիտության անքակտելի կապերով, որոնք նրա հետագա առաջընթացի պայմանն ու գրավականն են։

Այս պայմաններում, երբ կոմունիզմը կառուցող սովետական բազմամիլիոն ժողովրդի սոցիալիստական շինարարության պրակտիկան ամեն օր հարստացնում է սովետական ազգերի լեզուները նոր երևույթների հետ կապված նոր բառերով ու տերմիններով, անհնար է գործը այնպես պատկերացնել, թե այդ ազգային լեզուների հարստացումն ու զարգացումը կատարվում է կամ կտրող է կատարվել ինքնամիտի եղանակով, թե սովետական որևէ ազգի լեզուն զարգանում է կամ կարող է զարգանալ պռանց օգտվելու մյուս սովետական ազգերի լեզուների ձեռք բերած նվաճումներից կամ առանց օժանդակելու այդ լեզուների զարգացմանը։

Մեր օրերում, առավել քան երբեք, առնվազն տարօրինակ է հնչում «ոչ մարդկանց այն կարծիքը, թե որևէ լեզվի, օրինակ՝ հայերենի զարգացման «ներքին օրինաչափությունները» պահանջում են մերժել կամ թույլ չտալ, որ նրա մեջ մտնեն «օտարածին» էլեմենտներ, այսինքն՝ թույլ չտալ, որ հայերենի մեջ մտնեն ուրիշ լեզուներից, օրինակ՝ ռուսերենից վերցված նոր բառեր ու տերմիններ։ Այդ տարօրինակ (եթե չառենք ավելին) «տեսական» համաձայն մեր լեզվի շուրջը պետք է ստեղծել մի տեսակ շինական պարիսպ, որը պիտի «պաշտպանի» նրան «օտարածին էլեմենտների» ներթուրումից, իսկ հայերենի զարգացումը պիտի ընթանա միայն գրաբարի — լավագույն դեպքում նաև բարբառների — դեռևս չօգտագործված լեզվական պաշարի հաշվին, այսինքն՝

«զարգանալու» համար մեր լեզուն պիտի կառչի անցյալին, իդեալականացնի այդ անցյալը, պիտի զմայլվի «կղերականությունը լեզուն կյանքի» (Տերյան) լեքսիկոնից վերցրած կամ մխիթարյան վանահայրերի հետևությունները մեր շունեցած ամեն մի բառի փոխարեն թխված «հայաշունչ» բառերով («պոչազգեստ» — ֆրակ, «շարժական» — կինո և այլն) և «կանոնավորվի» այն հաշվով, որ իր քերականության ու բառային ֆոնդի հիմնական էլեմենտներով մոտենա վաղուց կաստայական, մեռած լեզու դարձած և դեռևս 19-րդ դարի մեր լուսավորչների կողմից մերժված գրաբարին:

Ինչպես ժամանակակից արդյունաբերությունն ու տեխնիկան չի կարելի նույնացնել անցյալի արհեստագործական խղճուկ ձեռնարկությունների հետ, նույնպես և ժամանակակից հայերենը չի կարելի նույնացնել հայ ժողովրդի լեզվի անցյալի վիճակների, առավել ևս գրաբարի հետ: Միայն սովետական պայմաններում հայոց լեզուն իր զարգացման ոսկեդարն է ապրում: Այդ շրջանում նա դարձավ պետական լեզու և կարճ ժամանակում հարստացավ սովետական նոր կյանքի ու կուլտուրայի, արվեստի ու տեխնիկայի, գրականության ու գիտության հետ կապված նոր բառերով ու տերմիններով, ինչպես՝ բոլշևիկ, սովետ, կոմունիստ, կոլխոզ, սովխոզ, լեյտենանտ, մայոր, էվակուացիա, մաներ, տրակտոր, կոմբայն, բրիգադա, ստրատեգիա, տրոլեյբուս, ոսպիո, միկրոֆոն, դիրեկտոր, տանկ, լաուրեատ և այլն. սովետական մամուլը լայնորեն օգտագործելով գրական հայերենի բոլոր հնարավորությունները, տերիտորիալ բարբառների, հին ու նոր գրական լեզուների կենսական իրողությունները և ռուսերենի զարգացման փորձը՝ կազմեց նոր բառեր ու բառակապակցություններ, որոնք է՛լ ավելի հարստացրին ու ճկուն դարձրին մեր լեզուն. այդ բառերից և բառակապակցություններից իբրև օրինակ նշենք թեկուզ ֆարվածային, ֆարվածային աշխատանք, ստախանովական շարժում, սոց-մրցույթ, ականանետ, ականոտ, դեսպանորդ, տեղանք, կերպար, կանգառ, դիտանց, մոլասորգ, խողովակալում և այլն. դառնալով պետական պաշտոնական լեզու և ձեռք բերելով նոր ֆունկցիաներ, հայերենը ոչ միայն հարստացավ այդ նոր ֆունկցիաների հետ կապված բառերով ու դարձվածքներով, այլև բարձրացավ նրա տեսակարար կշիռը ամբողջ հայ ժողովրդի աչքում և նա դարձավ այն միակ լեզուն, որով զարգանում է հայ ազգային գրականությունը, հայ ժողովրդի կուլտուրան ու արվեստը, որով դաստիարակվում է հայ երեխան՝ դառնալով կոմունիզմի աննկուն մարտիկ:

Այս բոլորից հետևում է, որ մեր ազգային լեզվի հետագա կատարելագործման հարցերը քննելիս, ոչ թե պետք է ելնել հայ անցյալի գրական լեզուներից և բարբառներից, ինչպես հակված են կարծելու որոշ լեզվաբաններ ու գրողներ, այլ պետք է ելնել մեր ժողովրդի ու նրա լեզվի արդի վիճակից, մշակել մեր լեզուն՝ նկատի ունենալով սոցիալիստական ազգերի կուլտուրաների ու լեզուների զարգացման հեռանկարները և այնքանով օգտագործել հին լեզուներն ու բարբառները, որքանով դրանք չեն հակասում ժամանակակից հայերենի ընդհանուր խնդիրներին, որքանով այդ փաստերը օժանդակում են սովետական ժողովուրդների լեզուների և առաջին հերթին ռուսաց լեզվի ու հայերենի եղբայրական կապի ամրապնդմանը: Իսկ այն մարդիկ, որոնք կփորձեն շեղել մեր լեզվի առաջընթացը, իդեալականացնել գրաբարը, կամ, ինչպես ճիշտ կերպով նշել է ընկ. Զ. Գրիգորյանը Հայաստանի բոլշևիկների 15-րդ համագումարում իր արտասանած ճառում, երկու լեզվի բաժանել մեր ազգային

լեզուն և հակադրել այն «ռուսական կուլտուրային, որն այնպիսի մեծ պրոգրեսիվ դեր է խաղացել հայ կուլտուրայի, գրականության և լեզվի զարգացման մեջ, կտրել հայ կուլտուրան նրա ժողովրդական ակունքներից, առաջավոր ռուսական կուլտուրայի բարերար ազդեցությունից և այն կապել բուրժուական արևմուտքի ռեակցիոն կուլտուրայի հետ», — այդ մարդիկ պետք է նշավազվեն, որովհետև նրանք ճիշտ չեն պատկերացնում մեր լեզվի զարգացման հարցերը:

Սովետական գիտնականների և գրականագետների բացարձակ մեծամասնությունը, իհարկե, ճիշտ է հասկանում մեր լեզվի զարգացման ու էլ ավելի կատարելագործման, մեր անցյալի կուլտուրական ժառանգության գնահատման, ինչպես նաև հին գրական լեզուների՝ գրաբարի, միջին հայերենի լեզվական իրողությունների օգտագործման հարցերը: Սակայն այդ չի նշանակում, թե պետք է թուլացնել այն պայքարը, որը տարվում է մեր պետական, գրական լեզվի մշակման ու հետագա կատարելագործման համար: Այսուհետև ավելի ևս պետք է ուժեղացնել հսկողությունը մեր հրատարակչությունների աշխատանքի վրա և թույլ չտալ լեզվաբանորեն խոտան գործեր, որովհետև մեր պետական լեզվի օրինաչափությունների դեմ մեղանշող ամեն մի գործ չի կարող համապատասխանել բովանդակությամբ սոցիալիստական և ձևով ազգային կուլտուրայի պահանջներին և կատարել այն խնդիրները, որոնք դրված են յուրաքանչյուր գրողի և գիտնականի առաջ:

Այս բոլորից հետևում է՝

1. Հին հայերենը կազմավորվել է հայ ժողովրդի կազմավորման հետ՝ հայ ժողովրդի կազմավորման մեջ իշխող գեր կատարած ցեղախմբի ընդհանուր լեզվի հիման վրա և գործածվել է իբրև հայ ժողովրդի ընդհանուր լեզու նախքան մեր թվարկությունը երկրորդ դարից սկսած:

2. Հին հայերենի հետ եղել են նաև բարբառներ, որոնք հայ ժողովրդի զարգացման տարբեր շրջաններում տարբեր հարաբերությունների մեջ են եղել ընդհանուր լեզվի հետ, համեմատաբար մոտ կամ հեռու լինելով նրանից:

3. Հին հայերենը օգտագործվել է իբրև պետական լեզու 5-րդ դարից դեռ շատ առաջ. հետևաբար գրական մշակման ու կատարելագործման է ենթարկվել հայ մտավորականության կողմից:

4. Քրիստոնեության մուտքը Հայաստանում և հայ գրերի գյուտն ավելի են օժանդակել հայոց լեզվի մշակմանը, բայց դրան զուգընթաց հին հայերենը սկսել է ավելի ու ավելի ծառայել եկեղեցուն և ավելի հեռանալ խոսակցական լեզվից:

5. Հայ ժողովրդի քաղաքական ու տնտեսական կյանքում կատարված փոփոխությունների, հայ պետականության վերացման, Հայաստանը արաբական տիրապետության ենթարկվելու հետևանքով գրաբարը կորցնում է պետական լեզվի ֆունկցիան, աստիճանաբար դադարում է համաժողովրդական հաղորդակցական միջոց լինելուց և սկսում է օգտագործվել հայ եկեղեցու և ֆեոդալական հարաբերությունների հետ կապված մտավորականության կողմից, դրանով իսկ իրեն դատապարտելով մահացման:

6. Գրաբարն ամբողջ հայ ժողովրդին անհասկանալի դառնալուց հետո, 10—12-րդ դարերում, բարբառների հիման վրա սկսում է ձևավորվել նոր լեզու:

¹ Տես «Սովետական Հայաստան», № 68, էջ 3, 1951 թ., մարտի 23:

միջին հայերենը, որը կիլիկյան թագավորության շրջանում դառնում է միաժամանակ գրական-պետական լեզու և գրական մշակման ենթարկվում: Հետագայում այդ լեզուն նույնպես կորցնում է իր պաշտոնական լեզվի ֆունկցիաները և ում ճյուղի բարբառների, գլխավորապես Արարատյան բարբառի հիման վրա, հալ ազգի կազմավորման հետ, սկսում է կազմավորվել հայոց ազգային լեզուն՝ աշխարհաբարը, որն այժմ դարձել է այն միակ լեզուն, որով զարգանում է հայկական կուլտուրան ու գրականությունը:

7. Սովետական իշխանության պայմաններում հայոց լեզուն ստացավ զարգանալու և հարստանալու ամենալայն հնարավորություններ: Մեր լեզվի հետագա զարգացման հիմքը առաջին հերթին հանդիսանում է հարուստ, բազմակողմանի, բուռն կերպով զարգացող սոցիալիստական իրականությունը, կոմունիստական պարտիայի կողմից ղեկավարվող ժողովրդական մասսաների աշխատանքի ու պայքարի պրակտիկան, մասսաներ, որոնք հենց հանդիսանում են լեզվի ստեղծողն ու կրողը:

Գրաբարը և բարբառները, մասնավորապես արևմտահայերենը հայ լեզվի հետագա զարգացման հիմնական աղբյուրները համարելու փորձերը ոչ մի քննադատության չեն դիմանում: Ժամանակակից հայերենը այդ աղբյուրներից արդեն վերցրել է այն արժեքավորն ու կարևորը, որ պարունակում էին նրանք: Իհարկե, սա չի նշանակում, թե ժամանակակից հայերենի բառարանային ֆոնդը չի կարող լրացվել գրաբարից ու բարբառներից վերցված բառերի որոշ թվով, սակայն անվիճելի է, որ գրաբարն ու բարբառները չեն կարող հանդիսանալ հայերենի հետագա զարգացման հիմնական բազան:

8. Անընդունելի է այն տեսակետը, որի համաձայն իբր թե հայոց լեզվի մաքրության շահերը պահանջում են չինական պարսպով սահմանազատել մեր լեզուն «օտարածին էլեմենտներից», թույլ չտալ, որ հայերենի մեջ մտնեն այլ լեզուներից, և առաջին հերթին ռուս մեծ ժողովրդի լեզվից վերցված տերմիններ ու բառեր: Ժամանակակից հայերենը, ինչպես և մեր երկրի սոցիալիստական բոլոր ազգերի լեզուները, չեն կարող զարգանալ մեկուսացած ձևով՝ հարստանալով միայն իրենց անցյալի գրական լեզուների հաշվին, առանց օգտուվելու լեզվական այն հսկայական պաշարից, որ կուտակել են ուրիշ լեզուները և մասնավորապես ռուսաց լեզուն, որը ստեղծել է ու ստեղծում է սոցիալիստական շինարարության, մեր նոր առօրյայի և կյանքի հետ կապված բազմաթիվ նոր բառերի ու տերմինների մեծագույն մասը:

С. Казарян

Некоторые вопросы истории грабара и современного армянского языка в свете учения товарища Сталина о языке

Р е з ю м е

1. Древнеармянский язык сложился на основе общего языка союза племен, играющего решающую роль в образовании армянского народа, и, начиная со второго века до нашей эры, обслуживал армянский народ как единый общий язык.

2. Рядом с древнеармянским языком существовали территориальные диалекты, которые на разных этапах развития армянского народа имели большие или меньшие расхождения с общенародным языком или в отношении друг друга.

В эпоху феодальной раздробленности характерной тенденцией в развитии армянского языка было усиление расхождения между общенародным языком и территориальными диалектами.

3. Древнеармянский язык был использован в качестве государственного языка задолго до 5-го века нашей эры. Этот факт говорит о том, что древнеармянский язык подвергался обработке еще в дописьменный период своего развития.

4. После принятия христианства армянским народом и создания армянского алфавита армянский общенародный язык подвергается дальнейшей обработке. С этого момента он приобретает новую функцию, начинает обслуживать церковь и духовенство, в результате чего усиливается расхождение между письменным и разговорным языком и диалектами.

5. С распадением армянского государства и с лишением функции государственного языка грабар еще более отмежевывается от диалектов. В последующие столетия, когда Армения подвергается арабскому нашествию и изменяется ход развития армянского народа, древнеармянский язык—грабар—перестает служить средством общения для всего армянского народа. Он обслуживает церковь и духовенство, и тем самым становится кастовым языком, деградирует и обрекает себя на отмирание.

6. После распада древнеармянского языка, в X—XII столетиях, на основе территориальных диалектов образуется среднеармянский язык, который в Киликийском армянском царстве в XIII—XIV веках используется в качестве государственного языка и подвергается обработке со стороны интеллигенции того времени. Со времени распада Киликийского царства среднеармянский язык терпит крах.

С образованием армянской национальности на основе территориальных, главным образом араратских диалектов, образуется армянский национальный язык—ашхарабар, который развивается и обогащается под влиянием великого русского языка. На этом языке развивается армянская культура, армянская литература и искусство.

7. В условиях советской власти армянский язык получил самые широкие возможности развития и обогащения. Основой дальнейшего развития армянского языка является, в первую очередь, богатая, многогранная, бурно развивающаяся социалистическая действительность, практика руководимых коммунистической партией народных масс, которые и являются создателями и носителями языка.

В свете сказанного не выдерживает никакой критики попытка превращения грабара и диалектов, в частности так называемого западноармянского языка в основные источники дальнейшего развития армянского языка. Современный армянский язык взял уже из этих источников наиболее ценное и нужное, что содержалось в них. Не исключается, конечно, возможность пополнения словарного фонда современного армянского языка некоторым количеством слов из грабара и диалектов, но они, тем не менее, не могут являться основной базой дальнейшего развития армянского языка.

8. Неприемлема точка зрения, согласно которой интересы сохранения чистоты армянского языка требуют якобы ограждения нашего языка от „чужеродных элементов“ китайской стеной, недопущения в армянский язык слов и терминов из других языков и, в первую очередь, из великого русского языка. Как современный армянский язык, так и языки всех социалистических народов нашей страны не могут развиваться обособленно, обогащаться лишь за счет своих прошлых литературных языков. Они не могут не пользоваться тем величайшим запасом, который накопили другие языки и, в частности, русский язык, создавший и создающий большую часть многочисленных слов и терминов, связанных с социалистическим строительством, нашей действительностью и жизнью.